


~~491.99(077)~~

U-93



371.3
U-93
V8

W 828
491.99 (077)
U-93

1 MAR

ՀՐԱՏԱՐՈՒԻՉ՝ Մ. Գ. ՄԻՍԿԵՐԵԱՆ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Յ Ց

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ Ա.Ի.Ա.ՆԻՄԱՆ ԲՆԱԿԱՆ ՁԵԻԸ

Վրացախօս, Տանկախօս եւ Ձերեգախօս դպրոցներում գործնական դասերով

կամ

Նորագոյն բնական մերոզով օտար՝ կամ ռուս. լեզուի աւանդումը մեր դպրոցներում լիակատար բացատրութիւններով.

՝ ԱՌՈՋԻՆ ՀՐԱՏԱՐՈՒԹԻՒՆ Խ՝

Աւիասասիրութիւն

ԵՐԵՄԻԱ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆՑ



Վ.Ա.ՂԱՐՇԱՊԱՆ ԳՐԱԳՈՐԿԱՆ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՄՐԵՈՅ ԷՃՄԻԱԾԻՆ

1907

ՁՈՒՑ ԱՐԴԻՒՆՔԻ ՈՐՈՇ ՄԱՍԸ ԿԸ ՅԱՏԱԽՈՒԻ ԲԱՐԵԳ. ՆՄԱՍԱԿԻ

1008
36235



06 AUG 2013

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ. ԱՌԱՋՆՈՐԴ

Հ Ա Ն Գ Ո Ւ Յ Ե Ա Լ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ս Ե Դ Ր Ա Կ Ե Ա Ն Ի

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

Ն Ո Ւ Ի Ր Ո Ւ Մ Է

Հրատարակիչ՝ Մ. Դ. ՄԻՍԿԱՐԵԱՆ.

ՄԻՆԱՅ ԴԱԽԻԹԻՉ ՄԻՍԿԱՐԵԱՆ

ԲԱՐԻ ՄԱՐԴ

Դուք կամեցաք, որ մեր փոքրիկ սշխատութիւնը հրատարակուի, որպէսզի մեր զպրոցական ասպարէզում պաշտօն վարողները՝ մանաւանդ զիւղական ուսուցիչները գործը որոշ չափով թեթեւցրած լինինք. երկրորդ Ձեր փափազն էր նուիրել հանգուցեալ գեր. Արիսակէս արքեպիս. Սեդրակեանի անմոռանալի յիշատակին: Այո՛, ուրիշները գուցէ և զարմանան, բայց ես որ երկար տարիներ ականատես եմ եղել թէ հանգուցեալը իր թեմի և մանաւանդ Յարիցիւնի հայ հասարակութեան համար ո՛րչափ ջանք է թափել— որ և Ձեր շնորհիւ այսօր հեռու շատ հեռու, Վոլգայի ափում բարձրացած է հայ եկեղեցու կաթողիկէն իր սուրբ խօշով— պահապան և միակ կապը ցրուած հայ ազգի:

Այդ ամենից յետոյ ինձ կըմնայ հրապարակապէս յայտնել Ձեզ իմ խորին շնորհակալութիւնը, որ զրքիս տպագրութեան ծախքը Ձեր վրայ ընդունեցիք:

Ուղեցոյցի գուտ արդիւնքի որոշ մասը կը յատկացուի բարեգործական նպատակի:

Ձեզ միշտ օրհնող
ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ



Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ն Ե Ր Ի Ն

Ձեզ եմ ասում, ձեզ, հայոց նորահաս երիտասարդք, տասը լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատը դա՛յիմ բռնեցէք:

Խ. Աբովեան.

Յարգելի պաշտօնակից ուսուցիչներ,

Ձեր առաջ ենք դնում մի փոքրիկ գործ, բայց շատ կարևոր ու դեռ մշակութեան էլ կարօտ. դնելով ձեր առաջ՝ մենք խնդրում ենք յօգուտ մատաղ սերնդի ուղարկէք ձեր նկատողութիւնները մեզ, որպէսզի մենք հնարաւորութիւն ունենանք օգտուելու: Այսպիսի դժուար ու վիճելի հարցերում միայն հաւաքական՝ բարեյաջող ուսումնասիրութիւններով կարող ենք գործը նպատակին ծառայեցնել:

Գործնականի բովից անցած ամեն մի դասաւանդման եզանակ բնական ձևով պարապող ուսուցիչների կողմից ուղարկածները ուրախութեամբ պիտի տեղաւորենք ժամանակին իր տեղում (միայն մշակուած): Գովասանքներով կամ պախարակելով գործի պակաս կողմերը չեն լրանում, այլ լուրջ աշխատութիւններով. ուստի խնդրում ենք առաջարկածը քննութեան ենթարկել և փորձել. ահա, թէ գործը ինչ ձևով պէտք է առաջ տանենք ու գտենք:

Ս. Վ. Ս.

ԻՆՉ ԱՂԲԻՒՐՆԵՐԻՑ ԿԱՐԵԼԻ Է ՕԳՏՈՒԵԼ

1. Руков. къ препод. рус. яз. в. инород. учил. Дависа.
2. Метод. руков. для первод. об. рус. яз. в. инород. школахъ. Шельцеля.
3. Распрос. «естеств.» мет. в. Америк. опыта для Рос. П. Мижуевъ.
4. Примѣн. «естеств.» мет. новыхъ языковъ в. Франціи, К. Гартманъ.
5. Натураль. мет. препод. иност. яз. В. Фармаковскій.
6. Что такое хорошіи урокъ?. Н. Бобровниковъ.
7. Методика обуч. отеч. яз. К. Ельницкаго.
8. Какъ уч. грамотѣ реб. Н. Корфъ.
9. Хрестом. для армян. I. ч. С. Мандинянъ.
10. Обрзованіе за 1894. № 4, 8.
11. Семья и Школа за 1873. № 9.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա) Ընթերցողներին. հրատարակչին: Համառօտ տեսութիւն տաճկ. վրաց և չերքեզախօս դպրոցների մասին. հարցը Ա. Կենդրոնական ժողովում. կարծիքներ. 2 աղիւսակ. ինչու են մոռցել մ. լեզուն. օտար լեզուների բնական ձևերը. կարծիքներ. գործնականի և թարգմանորէնի նշանակութիւնը:

Գործնական տեսութիւն.

Բ) Լեզուն ինչպէս է զարգանում տանը. թոթովել. տեղափոխել նոյնը դպրոց. գործնականի պահանջը. ուսուցչ. վիճակը. «Телеграфъ»-ի բարերար ազդեցութիւնը. Ա. մեր չը մշակուած դասը. աշակ. օգնում են ուսուցչին. թանգարան. բնական դասարաններ. գետի ափ. գերեզմանատուն:

Գործնական դասեր

Գ) Անուններ. համեմատութիւն. կազմել խօսքերից նախադասութիւններ. թուերի, բայերի, գոյների կամ ածականների, օտանաւորների, պատկերների և ձեռնարկների մասին:
Դ) Կարևոր օժանդակիչ միջոցներ. ծնող և հոգ. յարաբերութիւնը. Ուս. Ֆօնդի մասին:

Ուսաստանում գոյութիւն ունեցող Հայոց եկեղեցական ծխական դպրոցները լեզուի տեսակէտից, բացի զուտ Հայախօս վարժարաններից, կարելի է երեք կարգի բաժանել. ա) վրացախօս, բ) տաճկախօս, գ) չերքեզախօս Հայ դպրոցների: Առաջի կարգին պատկանում են այն վրացախօս Հայ երկսեռ մանուկների դպրոցները, որոնք գտնուում են վրաստանի զանազան քաղաքներում կամ աւաններում, ուր Հայ ժողովուրդը բնիկ վրացու աննշան մասն է կազմում:

Երկրորդին պատկանում են Բեսարաբիայի Աղքերման քաղաքի*), Օդեսայի, Քիշնևի, մի ժամանակ Իզմայլի (ներկայումս դպրոց չկայ), Գրիգորիոպոլի կամ Չոռնայի երկսեռ դպրոցները: Երրորդ կարգի նմուշը մեզ տալիս է Կուբանի շրջանում Արմաւիր աւանի չերքեզախօս Հայ երկսեռ մանուկների դպրոցները:

Պարզ է որ վերևում յիշուած մանուկների ծրնողներն էլ երեք կարգի են բաժանուում, բացի զրանից

*) Կարողաւ մեր յօդուածը Նոր-դարի 1888 թ. № 59. եւ Էմինեան ազգապրական ժողով. 2. Ամառեանի. հ. Գ. երես 7. «Ռուսաստանի մէջ Աղքերմանի հայերը քոլորովին թրքախօս են»:

պիտի շեշտենք՝ որ ամեն մինի մայրենի լեզուն համարուում է այն լեզուն, որով նոքա խօսուում են. այսպէս՝ տաճկախօսներինը՝ տաճկերէնը, վրացախօսներինը՝ վրացերէնը և չերքեզախօսներինը՝ չերքեզերէնը*):

Դժուար է այդպիսի դպրոցներում հայոց լեզուի ուսուցչի պաշտօն վարելը և շատ դժուար. այդ տաժանակիր աշխատանք է: Բաւական չէ, որ դու գիտես ու տիրում ես քո աւանդելի առարկային՝ մայրենի լեզուին, այլ և անհրաժեշտ է գործի յաջողութեան համար գիտենալ և մանկան օտար—բայց մայրենի համարուած լեզուն. այս մի շատ դժուար ու փափուկ հարց է: Երևի այդ է բուն պատճառը, որ այն կողմերի հոգաբարձուները կամ հասարակութիւնները միշտ էլ որոնել են այնպիսիներից ընտրել իրանց դրպրոցների համար ուսուցիչներ, որոնք գիտենային և իրանց օտար լեզուն. փորձով գիտենք և կարող ենք վկայել, որ այս հանգամանքն է զխաւոր պատճառներից առաջինը, որ նոյն հասարակութիւնը գերադասել է իր միջից դուրս եկող ուսուցչին և միշտ էլ առաջի տեղը նորան են տուել քան թէ մի ուրիշին, որը թէև զարգացումով, կրթութեամբ աւելի բարձր է եղել իրանց տեղացի ուսուցչից, բայց նոցա լեզուով խօսիլ չգիտէ: Քահանայ ընտրելիս էլ այդ խոշոր կարիքը աչքից չեն թողնում. թէև շատ անգամ իրանց նպատակին չեն հասնում:

Մինչի այսօր էլ լաւ եմ յիշում Աղքերմանում ուսուցիչ եղած միջոցիս, դպրոցի պառաւ կիսահայա-

*) Բայց ազգով ու կրօնով շատ լաւ հայ են.

խօս բարի վարժուհին ինձ հարցրեց. «պ. վարժապետ, դուք թիւրքճեա (տաճկերէն) գիտէք»: Ինձ առաջին անգամից այդպիսի մի հարցի պատասխանել օտարուտի թուաց, բայց չանցած մի քանի դաս՝ ոչ թէ մի քանի շաբաթ, ինձ համար հարցը պարզուած էր: Նոյն իսկ մի ժամանակ այսինքն դեռ 1860-ական թուականներէց Կ. Պօլսից են եղել ուսուցիչ հրաւիրելիս. այդ ամենը փաստ են:

Առ հասարակ մեր անուանի մանկավարժները, մինչի այսօր էլ այդ կողմերի հայերի և կամ նոյն տեսակ դպրոցների մասին, վստահ կերպով կարելի է ասել, որ ոչինչ չեն արել. մինչև անգամ բացարձակ կարելի է ասել՝ ոչ ոք ուշք չէ դարձրել: Գուցէ մեղադրեն հոգևոր թեմական առաջնորդներին, որոց անմիջական հսկողութեան, հովանաւորութեան տակ են գտնուել և որոնք այսօր էլ հովանաւորելով նոյն դերի մէջ են. մենք կը պատասխանենք այդ. նոցա կողմից ևս անուշագիր է թողնուած*): Մեզ սխալ չհասկանալու համար պարզենք մեր միտքը. յիրաւի հոգեւոր իշխանութիւնը աշխատել է տաճկախօս, վրացախօս և չերքեզախօս հայ հասարակութիւնների կամ նոցա զաւակների համար դպրոցի դռները միշտ բաց պահելու և՛ նոյն իսկ եկեղեցական գումարներից նուպաստներ են բաց թողել անապահով դպրոցներին իրանց գոյութիւնը պահելու համար. բայց թէ այդպիսի

*) Չնայելով որ Տ. Բենիկ վ. ի պէս զիտնական մանկավարժի? քթի տակին են այդ դպրոցները գտնուում եւ, որչափ ինձ յայտնի է, միշտ էլ Աղքերման է գնում. Ապա Քիշնեւի՞նը.

դպրոցներից մատաղ ու անմեղ երեխաները ինչ չափով են իրանց մոռացած հայ մայրենի լեզուից օգտուել. այդ գոնէ ինձ համար շատ պարզ է և առանց տատանուելու կը պատասխանեմ շատ աննշան է, իսկ տեղ-տեղ ոչ մի օգուտ: Ահա այս յիշուած տեսակետից, թէ մեր մանկավարժ ուսուցիչների և թէ հոգեւոր հովանաւորողների կողմից և ոչ մի յառաջադիմութեան քայլ չէ եղած, և զուցէ դեռ երկար ժամանակ էլ այդպէս կշարունակուի, եթէ ունենանք թեմական առաջնորդներ, որոնք շատ և շատ քիչ գաղափար ունին մանկավարժութեան մասին—և ո՞րտեղից պիտի զիտենային և ո՞րտեղից պիտի դուրս գան:

Ռուսաստանի առաջին հայ կենդրոնական*) պատգամաւորական ժողովում դպրոցական հարցը քննելիս ինչիւր զարթեց, զուցէ և զիտակցաբար արծարծուեց, Վրաստանի կողմից եկած մի պատգամաւորի առաջարկութեամբ այս առթիւ: Հարցը դրուած էր այսպէս. ինչպէս անել, որ մեր մանուկները ազատուին վրացախօսութիւնից կամ ճիշտ խօսած կը լինէր, եթէ ասէր. ինչպէս մեզ և մեր դպրոցները ազատել տիրապետող վրացի լեզուից: Բարեբաղդաբար ժողովում կային ուսուցիչ պատգամաւորներ և մինչև անգամ յատկապէս դպրոցական գործերի համար հրաւիրուած էին պ. պ. Բ. Տ. Միրաբեանը և Ս. Լիսի-

*) Բացուեց 1906 թ. օգոստոսի 18-ին Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ, ձեռնարանի հիւանդանոցի դահլիճում. իսկ երկրորդ նիստը տեղի ունեցաւ նոյն հիմնարկութեան յարմարացրած ընդարձակ ննջարանում. մինչի փակուելը:

ցեանը և ինչ էք կարծում այդ միանգամայն կարեւոր ու անյետաձգելի հարցը հրաւիրեց ձեռնհաս պատգամաւորների ուշադրութիւնը, որոնցից շատերը ժամերով իրանց ճառերին նիւթ դարձրին. որոշ չափով հարցը արծարծուեց ու պարզուեց, թէ և լուրջ եզրակացութիւնների չկարողացան դալ, որ շատ բնական էր. բայց և այնպէս հարցը այնքան հետաքրքիր ու կարեւոր ճանաչուեց, որ ժողովը միաձայն ընդունեց, որ հարցը բազմակողմանի քննուի. դորա համար էլ մտցրին քննուելի դպրոցական սեկցիայի ծրագրի բաժնում և ապա ներկայացուի վերջնական որոշումի:

Բոլոր ճառասօսների կարծիքները կարելի է երեք հայեցակէտերի բաժանել.

ա) Եղան պատգամաւոր ուսուցիչներ, որոնք աչքի առաջ ունենալով, որ այդպիսի դպրոցները պահպանուում են հայ ժողովրդի արիւն-քրտինքով հաւաքուած դառն կոպէկներով, որ նոքա կրում են «հայ դպրոցներ» անունը և որ նոքա եկեղեցական կամ ազգային հիմնարկութիւններ են, հետեւապէս նոքա ծառայելու են որոշ նպատակի համար, որչափ այդ հնարաւոր է և կամ ինչ չափով հանգամանքները կը նպաստեն վրացախօս, տաճկախօս և չերքեզախօս մանկան նորից իր մոռացած մայրենի ազգային լեզուն սովորեցնել, նորից հայ մկրտել: Մեր դպրոցների նպատակն է լեզուն զարգացնել, մեզ ամօթ է, ասում էր մի պատգամաւոր, որ ինքներս մեր լեզուն չգիտենք, ո՞ւր մնաց, որ մեր որդիքն էլ պիտի զրկուին. էլ ինչով պէտք է ցոյց տալ, որ մենք հայ ենք, ինչո՞ւ պէտք է մեզ պահտուածը կորցնենք, և վերջապէս լեզուն մի խոշոր ու

աչքի ընկնող կապ է աղգերի գոյութեան հարցում. և զնելով այդպիսի մի արդարացի ու բնական պահանջ առաջարկում էին անպայման հայացնել:

բ) Խօսում են Տ. Ռաշմաճեան, Թ. Խզմայեան, ցոյց են տալիս, որ պատգամաւորների պահանջները մանկավարժական հիմունքների վրայ հիմնուած բոլորովին սխալ են, այլ ընդահակառակը պահանջում էին յանուն մանկավարժութեան բոլոր առարկաները երեխային աւանդուի իրանց հասկանալի խօսուն լեզուով. բոլորովին նշանակութիւն չունի, թէ դա տաճկերէն է, վրացերէն կամ չերքեզերէն. պարոնները իրանց տեսակէտը փաստերով պաշտպանում էին, հիմք ունենալով մանկավարժական և հոգեբանական կանոնները: Մոցա ասելուց այս կարելի է եզրակացնել, որ երեխայի խօսուն լեզուն նորա մայրենի լեզուն է, և թէ դա սովորեցնելու լաւ ճանապարհն է, այսպէս սոցա ճառերի բովանդակութիւնները մեզ տալիս են առաջինների հակառակ պատկերը: Բացարձակ չընդունեցին առաջինների առարկութիւնները իբրև նպատակ:

Մի քանի պատգամաւորներ միջանկեալ հետևեալը ասացին. էլ ի՞նչ նպատակ ունի այդպիսի հայ վրացախօս և այլն զպրօցների գոյութիւնը, և ինչո՞ւ հազարներ ենք ծախսում դոցա վրայ. մանաւանդ ամեն մի քաղաքում կան օտար դպրօցներ ուր բացի հայոց լեզուից միւս բոլոր առարկաները աւանդուում են:

Վերջապէս ծիծաղելի չէ հրաւիրել տաճկախօս, վրացախօս, չերքեզախօս ուսուցիչներ:

Ո՞րտեղից ենք հրաւիրելու. այդ ո՞ր տաճկական կամ վրացու բարձրագոյն զպրօցներն են, որոնք տալիս են

այդպիսի ուսուցիչներ և ո՞րտեղ են դոցա գոյութեան տեղերը: Վերջապէս հէնց իրանց վրացիների կամ տաճիկների դպրօցները ունին այդպիսի ուսուցիչներ և քանի՞ տասնեակներ են: Այդպիսի դատողութիւններ արտայայտողները առնուազը ծաղրում էին իրանց և ընկերների վերայ ու անպատուում ուրիշներին:

Ժողովուրդը այդ տեսակ չի մտածում, նա հոգով ցանկանում է և մինչի անգամ մի երկու տարի ահամայից որդուն զրկում է ուրիշ դպրօցներից, տալով առաջ հայ վարժարան՝ հայերէն սովորելու համար: Այս մեր ասածը տարիներ առաջ այդ կողմերի հայերի համար որոշ չափով կարծես թէ պարտադիր եղած մի օրէնք լինէր: Ի՞չպէս կարելի է հայ վարժարան չտալ. հարուստից սկսած մինչի աղքատը տալիս էր. միայն վերջին տարիներում մանաւանդ հարուստները ժամանակի պահանջի հետ փոխուել են. զոհ է գնում դարձեալ աղքատի որդին: Մեր ձեռքում եղած վիճակազրական-ստատիստիկական տեղեկութիւնները նոյն են ցոյց տալիս:

Ա Ղ Ի Ի Ս Ե Ա Կ

Քան սարի առաջ.	Գպրօցի սրել է երկսեռ մանուկներ.	Տաս սարի առաջ եղել է.	Գպրօցի սրել է երկսեռ մանուկներ.	Ներկայումս.
	Տուն		Հոգի	
Աղբերմ. 210	100—80	100—160	150—120	120.40—30
Քիչն. 100—85	70—60	70—60	30—25	70.20—25
* Օղես 50—70	30—20	100—80	25—20	200.250.18

*) Օղեսայում միայն հայերի թիւը գնալով շատացել է հետևեալ պատճառով, որպէս կենդրոնական ծովափնեայ յայտնի վաճառաշահ քաղաք. ամեն կողմերից ու ամեն ազգութիւններից էլ

Ա. Դ. Ի Ի Ս Ե Ա Կ *)

Այր եւ կին միասին.		Հայոց երկսեռ դպրոցին տուել են սովորողներ.	
	Հ-դժ		
Սիմֆեր. եւ դաւ.	2889	92 **	-82
Ղարսուբազար.	673	35	-40
Թէօդոսիա եւ դաւ.	1860	30	-23
Հին-Ղրիմ	410	36	-40
Եւպատորիա	423	36	-15
Արմենա. եւ դաւ.	423	20	- 1
Մելիտոպոլ	341	20	-15

Այդ աղիւսեակների վրայ հիմնուած մենք արձանագրելու ենք հետեւեալը. յիրաւի այդ տեսակ հայ դպրոցների ուսումնարանների երկսեռ սովորողների թիւը զգալի կերպով պակասում է, բայց ինչո՞ւ. ա) Մասամբ հայերէն չսովբեցնելու պատճառով. միամիտ ծնողը տեսնելով՝ որ որդին հայերէն չի կարող խօսել (բայց

հաւարուում են՝ ինչպէս եւ նայերից Այսօր Կովկասից եկած շատ հայ ընտանիքներ կան եւ եթէ մի քիչ իւր հասարակութեան մէջ կեանքի նշոյ է նրեւում, այդ միայն Կովկասից եկածների շնորհիւ է. բ) Կ. Պոլիս մօտ լինելով ան կողմից էլ եկուորներ կան. մի կողմ Սոդններ, որ Աղքերեանից, Քիշնեւից, Գրիգորիտպոլից եւ Արլիմ կողմից միշտ էլ զայիս են: Քաղաքի դպրոցների շատութեան պատճառով հայոց վարժարանը յետ է մնացել մանաւանդ ժամանակի սրահանջներին համապատասխան չէ ինչպէս ասուեց:

*) Տես Календарь и памятная книжка Тавр. губ. 1902 г. կամ Քոփչ. հանդէս օրացուցում 1903 թ. երես 465:

**) Առաջի սիւնեակը մենք հաւարել էինք հարցնելով 1892-ին տեղեակ մարդկանցից. իսկ դէմի երկրորդ սիւնեակը քաղում ենք Քոփչ. հանդէսից 1903 թ. երես 466. աշխ. պ. Սուրխաձեանի:

ո՞ւմ հետ) յուսահատուած որդուն դպրոցից հանում է. բ) Երեք տարի սովորելուց յետոյ ոչ մի պետական դըպրոց առանց պատրաստուելու ու քննութիւն տալու որդին չի ընդունուում: էլ ի՞նչ նպատակ ունի հայ վարժարան ուղարկելը:

Ի՞նչ համար անհրաժեշտ է նախ դպրոցի ծրագիրը յարմարացնել տեղական քաղաքային կամ գիւմնազիայի նախապատրաստական բաժանմունքի կամ առաջի և երկրորդ դասարանների հետ բանակցութեան մէջ մտնելով դպրոցական վարչութիւնների հետ: այնպէս, որ առանց քննութեան իրանց որդիքը և աղջկերքը կարողանան անխտիր ընդունուել ցոյց տուած դըպրոցներում, այդպիսով հայոց դպրոցների երեք տարին կարելի է հնգի վերածել, զորանով ծնողների և ժամանակի պահանջներին բաւականութիւն տուած կը լինինք, այլև այդ ձևով շատ ժամանակ շահած կը լինինք ու այդպիսով տղաներին միջոց տուած, որպէս զի նոքա կարողանան աւելի հիմնաւոր սովորել իրանց կորցրած մայրենի լեզուն: Բացի դրանից երեխան ապագայում փոքր հասակով կը վերջացնէ միջնակարգ դըպրոցի դասընթացը, և թէ հասակը կը ներէ, որ բարձրագոյն դպրոցում շարունակէ իր ուսումը: Այս մենք շատ տարիներ առաջ ասել ենք, մարդ գործնական պէտք է լինի. պէտք է կեանքի համար պատրաստուի. Եզան պատգամաւորներ էլ, որոնք ասացին. այդ հարցը պէտք է աւելիս թողնել, թող տեղի հայ հասարակութիւնը վարուի իր դպրոցների հետ այնպէս՝ ինչպէս տեղի հանգամանքներն են պահանջում, սա առնուազը գործը քաօսութեան հասցնել է նշանակում. սա ասել է

մեր մատաղ սերնդի կրթութիւնը անտէր թողնել, ընդունենք մի րոպէ, որ մեր ժողովուրդը կը հասկանայ (թէ և շատ սխալուած կը լինինք) բայց մի ղեկավարող դպրոցական մարմին պիտի գոյութիւն ունենայ՝ թէ ոչ: Մանաւանդ մեր ժողովուրդը դեռ շատ հեռու է կրթութեան ճանապարհից. դեռ շատ տարիներ կանցնին, բայց կրկին կանոնաւոր դպրոցներ չենք ունենալու, դասներ կբայելի է, ախտամա է. հէնց այժմեան դպրոցների վիճակը բաւական է աչքի առաջ ունենալ:

Իսկ պ. պ. Մանկավարժների և ոչ մինի կողմից հարց չը տրուեց, թէ ի՞նչպէս, ի՞նչ ձևով կարելի է այդ ցանկալի նպատակին հասնել. երևի հարցը նախ սկըջբունքային էր և մասնագիտական, երկրորդ գուցէ քըննուէր առանձնապէս դպրոցական սեկցիայում, եթէ ժողովը անակընկալ կերպով չը փակուէր *), մանաւանդ ինչպէս վերևում յիշեցինք այդ կարևորագոյն հարցը ծրագրի մէջ մտցրած էր:

Կասկած չկայ, որ երեք կարգի ճառախօսների կարծիքներն էլ ունէին իրանց փաստային պատճառները: Բայց մենք մի քիչ թերահաւատ լինելով՝ կասենք, որ այդ ամենը կը մնան լոկ ցանկութիւններ ու դատողութիւններ, որովհետեւ բնութեան մէջ այդ ամենը մենք չենք տեսնում: Բայց ամեն մի ծնող կամայ թէ ակամայ փտակցաբար թէ բնագոյամբ բնական օրէնքների ցոյց տուած կանոններով ու ճանապարհով իր գործածական լեզուն ժառանգաբար տալիս է իրանից ծնուածին:

*) Կեդրոնական ժողովը փակուեց Փոխարքայի հեռադրական հրամանով Սեպ. սկզբին:

վերջինը կամ լեզուն զարգացման բոլոր աստիճանների շրջանները մտնելուց յետոյ բնագրումով է իւրացնում*):

Ոչ մի ազատ մտածող Ֆրանսացի, անգղիացի, ամերիկացի, ճապոնացի թոյլ չեն տալ, որ իր ցեղի կամ ազգի կողմից ճանաչուած ու մայրենի անուշով սրբագործուած լեզուն իր զաւակը չգիտենայ. բացի դրանից դա անբնական կը լինէր, ինչպէս մենք տեսանք և դեռ առիթ կուրենանք համոզուելու:

Եթէ խաւար դարերի ընթացքում, այն էլ բռնակալ***) մարդկանց ճնշումների, ահ ու սարսափի տակ այս ինչ, կամ այն ինչ ազգերի ճակատին ժամանակի բըռնութիւնը իր ամօթաբեր կնիքով դրօշմել է լեզուի մոռացումը, և ստիպել են մոռանալ իրանց մայրենի լեզուն, որոնք մինչի այսօր էլ իրանց տգիտութեան պատճառով այդ անպատուաբեր ամօթի կապանքներից չեն ազատուել, այդ դեռ չի նշանակում, թէ նոքա՝ ազգի զաւակները իրաւունք չունին և պարտական չեն այդ ամօթից, թքից ու մրից ազատուել, ի՞նչ կասէ մի լու-

*) Մենք դեռ չգիտենք լեզուի ծագումը եւ այն օրէնքները, որոնցով դեկավարում է նա վերջին ինստանցիայում: Բայց մենք գիտենք, որ նա կազմակերպուում է վերին աստիճանի օրինական նշանով եւ որ միակերպ կազմակերպուած եակները, միեւնոյն պայմաններում ստեղծում են միատեսակ լեզու, Կ. Կառուցիկ:

**) . . . «Միանալով բռնակալական ճնշման հետ, կը հաստատեն, թէ այս տեղերու կառավարիչները մահուամբ պատժել սպառնացած են հայերէն խօսող անձեր, ու անհետ է ըրած բոլորովին հայ բարբառը», Էմին, Ազգ. ժող. բառարանի առաջաբան, երես 5. 2. Աճառեանի:

սամիտ օտար մարդ, երբ ես կասեմ օրինակ հայ եմ
և հայերէն խօսել չգիտեմ:

Այն պատմութիւնը որպէս ժամանակակից վկայ
վկայում է, որ նոցանախնիքը ստիպուած են եղել հան-
գամանքների առաջ խոնարհուել ու խօսել տաճկերէն
կամ մի այլ օտար լեզուով և կամ ապրել են այնպիսի
տարրի հետ, որը ակամայ թէ բռնի կամ բնական օ-
րէնքների հիման վրայ հիմնուած մոռացնել է տուել ազ-
գային լեզուն. բայց չէ որ այժմ քսաներորդ դարում
ենք ապրում. չէ որ ամեն տեսակ բռնութիւն, հալա-
ծանք գիտակցութեան առաջ խորտակուած են. մա-
նաւանդ կան կորցրածը յետ բերելու համար միջոց-
ներ ու ճանապարհներ:

Գուցէ շատերը մեզ սխալ հասկանան և ենթադրեն,
թէ մենք ազգային լեզուով հրապուրուած ուզում ենք
ասել թէ միայն մայրենի լեզուն պէտք է սովորենք.
ոչ. մենք լեզուներ գիտցողների երկրպագուներից ենք.
Եթէ հնարաւոր է, ինչո՞ւ չը սովորել դրացու լեզուն
էլ, պետական կամ տիրողն էլ Ֆրանսացուն էլ, գեր-
մանացուն էլ. մեր համեստ համոզմունքն է, որ ամեն
մի խոհուն ծնողի միակ ցանկութիւնը—հոգսը պիտի
լինի, որ իր զաւակները շատ լեզուներ գիտենան: Մի
քանի լեզուներ գիտենալով մարդ միշտ իւր մէջ կըզ-
գայ մի քանի էակների դոյութիւնը. այդ կարեւոր է
և՛ անհրաժեշտ: Մենք մանրամասնութեան մէջ չենք
կամենում մասնել, որ մի գուցէ հեռանանք մեր բուն
նպատակից՝ միայն այս կաւելացնենք. նոքա, որոնք
կենաքի մէջ իրանց կաշու վերայ փորձել են՝ արդէն
իսկ կարող են հաստատել, որ լեզուներ գիտենալը մար-

դուս համար երջանկութիւն է, մի մեծ հարստու-
թիւն:

Արդեօք ո՞ր հրէան, գերմանացին, տաճիկը, հայը,
վրացին չի ցանկացել և չի ձգտում, որ տիրապետող
լեզուն լաւ գիտենայ. և մի՞թէ իրանց զաւակների հա-
մար այդ նպատակին հասնելու պատճառով հազարներ
չեն ծախսում. չէ որ դա անհատի ինքնուրոյն դոյու-
թիւնը պահելու անհրաժեշտ պայմաններից մէկն է
կենաքի ծով ալիքների մէջ: Ի՞նչպէս կարելի է մրան-
սիայում ապրել և Ֆրանսերէն չը գիտենալ, եթէ չը
գիտէ՝ ընդունե՞ք, թէ ատում է՝ չի ցանկանում. բայց
ի՞նչպէս պէտք է իր առօրեայ պէտքերը հոգայ առանց
տիրող լեզուն գիտենալու: Հէնց օրինակ Ռուսաստա-
նում ապրող բազմատեսակ ազգերից, ո՞ր անհատը չի
ցանկացել, որ զոնէ իր զաւակը ռուսերէն գիտենար,
իր պէս անլեզու չը մնար, որպէս մի մոլորուած կեն-
դանի: Այդ մահացու մեղքի վերայ նա չէ մտածել և
չի էլ մտածում և բնական էլ չէ: Ինչո՞ւ որդուն թոյլ
չտար, որ իր դրացի պարսիկ տղայի, ռուսի, վրացու
հետ խօսի նոյն լեզուով. մի՞թէ գործնական ճանա-
պարհով ապացուցուած չէ, որ դա ուղղակի իր որ-
դու ապագայ օգուտն է պահանջում:

Բայց թէ՛ ի՞նչպէս աւանդել օտար լեզուն, ի՞նչ-
պէս հասնել ցանկալի նպատակին, որի համար տարի-
ների ընթացքում՝ թէ տէրութեան, թէ ժողովրդի
կողմից շարունակաբար ամեն տարի հազարներ են զոր-
ծադրուում. ահա դժուար ու կարեւոր մի խնդիր, որի
գէթ մի քիչ պարզելը մեր միակ նպատակը պէտք է
լինի—ցոյց տալ այդ նպատակին հասցնող գործնական.

կամ բնական ճանապարհը՝ ինչ չափով՝ որ մենք ենք հասկացել ու փորձել:

Մի քիչ առաջ յիշեցինք, որ այդ տեսակի դրպրոցները անուշադիր ու անխնամ են թողնուած. այդ կարելի է ապացուցուած համարել և այն հասարակ փաստով, որ մեր գրականութեան մէջ ամենեւին բնական ուղղութեամբ մանկավարժական գրուածքներ ու դասագրքեր չեն հրատարակուել. մեզ այնպէս է թրուում, թէ ոռուսաց գրականութիւնն էլ միայն վերջին տարիներում սկսեց այդ հարցի յետեւից ընկնել. որովհետեւ նոցա համար էլ հարկաւոր էր դիտենալ, թէ Ֆրանսերէն և այլ կարևոր ճանաչուած օտար լեզուները ի՞նչպէս պէտք է աւանդել իրանց երեխաներին տանը և կամ դպրոցներում. և որովհետեւ բնական մեթոդը դեռ ուրիշ երկրների նման Ռուսաստանում չէ տարածուել, գործնականութեան մէջ չէ մտել պարզ է, որ այդ նիւթով էլ քիչ գրուածներ պիտի լինէին:

Մեր ձեռքում եղած աննշան աղբիւրներից քաղուածօրէն կը բերենք այստեղ, թէ ընդհանրապէս օտար լեզու աւանդողները մինչի այսօր այդ առարկայի վերաբերմամբ ի՞նչ տեսակ են մտածել և ի՞նչ աւանդման ձեւ են գործածել:

«Ներկայումս օտար լեզու աւանդելու համար գոյութիւն ունի երկու ձև կամ եղանակ.

ա) Քերականական, որը շատ անգամ սխալմամբ ասուում է քարզմանական:

բ) Բնական կամ այսպէս անուանուած «համբի» համաձայն իր տեսակի գործնական նշանակութեանը նայելով: Քերականական մեթոդը—ձևը կայանում է

նորանում, որ նոր լեզուն ուսուցանելու ժամանակ աւանդողը հիմք ընդունելով քերականութեան կանոնները օտար լեզուի նկատմամբ և համեմատելով մայրենի լեզուի քերականական ձևերի հետ առաջ է տանում ուսուցման գործը:

Բնական մեթոդը շատերի կողմից գործնականապէս այսպէս են ձևակերպում: օտար լեզու աւանդելու ժամանակ պէտք է բռնել այն ճանապարհը, որով մանկան մայրենի լեզուի զարգացումն է առաջ զնացել, իսկ դպրոցական պարապմունքների ժամանակ բնական մեթոդը—եղանակը պահանջում է, որ ուսուցիչը օտար լեզուն աւանդելիս ամենեւին աշակերտների մայրենի լեզուից չօգտուի. աւելի պարզ ասած կը լինինք, եթէ ասենք, ուսուցիչը չը պէտք է գիտենայ աշակերտի լեզուն ասում է պ. Корханиди և ուրիշ յայտնի եւրոպական մանկավարժների կարծիքները ու եզրակացութիւնները առաջ բերելով ինքը աւանդում է միջին ճանապարհով. հետևողութեամբ կազմել է բնական եղանակով ոռուսաց լեզուի աւանդման համար ձեռնարկ *) բայց ոչ շատ յաջող:

«Рус. Н. Школя, 331—336 ст. Б. Фонь ասում է. այլազգիների լեզուի աւանդման պէտք է ոռուսաց

*) а) Методическое руководство къ преподаванію русскаго языка по учеб. руков. «Живое-Слово».

б) Лексическіе или разговорные уроки.

г) Живое Слово. Ձեռն. հայոց դպ. համար, այնպէս որ ե՞՞է մինը գնեցիր, պէտք է միւսն էլ ձեռք բերես, որովհետեւ մէկը միւսի հետ կապ ունի՝ մենք դորան հակառակ ենք. դա միայն շահագործել է նշանակում: գոնէ առաջի երկուսը կարելի էր միացնել:

գպրոցներում տեղ տար, որչափ էլ՝ որ այդ լեզուն արգելք դառնար կամ խանգարէր լեզուի աւանդմանը*)։ յետոյ սկսում է միանգամայն հայեցակէտը այլակերպել. ասում է. «Ռուսաց լեզուի ուսուցիչը այլազգի տղաների օգտի համար՝ որչափ հնարաւոր է՝ պէտք է լաւ զիտենայ իր օտար սանի մայրենի լեզուն. պէտք է ոչ միայն աւանդման պաշար ունենայ, այլ և բնականաբար կարողանայ ազատ ու պարզ խօսիլ օտար լեզուով։ Ամեն մի արտայայտուած բան պէտք է մայրենի լեզուով քարգմանէ, թէ՛ գրաւոր և թէ՛ բանաւոր վարժութիւնները առաջ ուսուցէն և ապա նոցա լեզուով կատարել տայ»։

Այս ամենից յետոյ Բարոն-Ֆոն մեզ հաւատացնում է, որ 15 ամսուայ ընթացքում այլազգի մանուկները կարող են ուսաց լեզուով լսած հէքիաթները պատմել ուսուցիչին և որ զլիսաւորն է՝ կարող են ուսուցիչին խօսիլ։

Մի փոքրիկ թուաբանական խնդիր մեր կողմից է թէ՛ ընդունենք, որ օրական աւանդում էր 6 դաս, շաբաթական կանէ 24 դաս. չորս շաբաթը $24 \times 4 = 96$ դաս. $15 \times 96 = 1440$ դաս, որը բաժանելով 24 ժամի վերայ կը ստանանք (գիշեր ու ցերեկ) 60 օր կամ 1440 ժ։ Ուրեմն Բարոն-Ֆոնի համոզմամբ օտար լեզու սովորեցնել կամ սովորելը մի երկու ամսուայ զործ է՝ եթէ շարունակ այդ առարկայով պարապէիք։ Ո՛չ, պ. Ես-

*) Թէպէտեւ Ե. Փոն, դա յոյն եւ գերմանացի տղաներին ուսացնելու միջոցը նպատակ է ընդունում. արժէ կարդար Թէ գրուածը ի՞նչ ողի է ցոյց տալիս։

Փոն, դուք մոլորեցնում էք զործը մակերևոյթային անցնելով. մենք այդ մի քիչ յետոյ ցոյց կը տանք։ Դարձեալ շարունակում է. «Ուսուցիչը պէտք է մայրենի լեզուից այնչափ օգտուի՝ որչափ կարիք է զգացուում բացատրութեան համար. բայց հէնց այդ դէպքում էլ ուսուցչի ճարպիկութիւնը, ստեղծագործութեան ոյժը պէտք է երևան զայ. այն է՝ որչափ հնարաւոր է պիտի խոյս տայ օտար լեզուից. այլ թող միշտ խօսի ուսուցիչին և այդ ձևով հնարաւոր է ամենափայլուն կերպով այդպիսի գպրոցներում իր նպատակին հասնել. այն է՝ սովորեցնել օտար սանին ուսուցիչին խօսել, զրել ու կարգալ։ Ուսուցիչը պէտք է լինի տոկուն, պահանջող՝ այնպէս որ աշակերտների հոգու մէջ պիտի կարողանայ այն համոզմունքը արմատացնել, թէ ուսաց զպրօցում միայն ուսուցիչին պէտք է խօսել»։

Հետևող ընթերցողը այս մի քանի նախադասութիւններից բաւական պարզ կը տեսնի պ. Ե. Փոն-ի մանկավարժական հասկացողութեան չափը, որ մի տեղ բացարձակապէս պահանջում է օտար սանի մայրենի լեզուի օգնութեամբ ուսուցիչին աւանդելը. իսկ վերջին պարբերութեամբ հակասելով առաջի պահանջին՝ մայրենի լեզուն զպրօցից արտաքսում է, այն էլ կոպիտ հակամանկավարժական ճանապարհով։

Այժմ վերլուծենք մի զլիսաւոր պայման՝ որը պ. Ե. Փոն երեւի կամ չգիտութեամբ կամ պարզ հասկացողութեամբ, բայց յետին մտքերով աչքաթող է աւնում. յոյն կամ գերմանացի աշակերտները ուսուցիչին են սովորել, ոչ թէ նորա համար, որ ուսուցիչը-

36235

ները լաւ են գիտցել յունարէն կամ գերմաներէն և կամ թարգմանօրէն են հասել ցանկալի նպատակին՝ այն է, որ կարողացել են ռուսերէն և՛ խօսել և՛ լսածը պատմել: Միջանկեալ այդ ո՞ր ռուս ուսուցիչներն են՝ որ այդ լեզուներով շատ լաւ ազատ խօսել գիտեն և այնքան պաշար ունին, որ կարող են դպրոցներում աւանդել կամ օգտուել, այն էլ գիւղի ուսուցիչներին, որոնք միայն ռուսաց երկդասեան կամ քաղաքական դպրոցների դասընթացներ են վերջացրել. այլ թէ պ. Բ. Փոնբ-ը չէ կամեցել իրողութեան ճշգրիտ պատկերը արձանագրել, որ յոյն և գերմանացի տղաները եղել են շատ թուով ռուս աշակերտների հետ—որոնք բնականաբար քչերի ազդեցութեան տակ ընկնել չէին կարող և կարիք էլ չունէին յունարէն սովորիլ. ընդհակառակը քչերը—յոյները և գերմանացիք ստիպուած էին իւրացնել իրանց շատ թրւով ընկերների լեզուն. մի խոշոր բան էլ պ. Բ. Փ.-ը մոռանում է. օտար երեխաները՝ ինչպէս և իրանց ծնողները ապրում են ռուս տարրի հետ. ասել է երեխան զեռ դպրոց չըմտած արդէն բաւական պաշար ունէր, հետևապէս կը նշանակէ պ. Բ. Փ. որպէս ուսուցիչ նոցա լեզուն է մաքրել ուրիշ ոչինչ: Այժմ պարզ է, որ 15 ամսուայ ընթացքում կարող էր պատահել այն, ինչ որ ասել էր մի քիչ առաջ:

Մեզ հայերիս յայտնի պ. մանկավարժ Ս. Մանդինեանը ասում է. «Մեր ուսումնարաններում ընդունուած թարգմանութեան մահացու եղանակը այլ արդիւնք չէր էլ կարող ունենալ*»): Սրանից պարզ կարելի

*) Տես նորերումս հրատարակած Начальная Рус. Хрестоматія

է եզրակացնել, որ պ. մասնագէտ մանկավարժը ընդունում է թարգմանօրէն աւանդելը, բայց քննադատում է աւանդման եղանակը: Նորից շարունակում է. «Լեզուի դասերից պէտք է արմատով վերցնել բառական նիւթական թարգմանութիւնը և տեղը դնել իմաստի, կատարեալ զօրութեամբ*): այն ևս հայացի թարգմանութեամբ**»):

Մի ուրիշ տեղ. «Մեր անխախտ սկզբունքն է, թէ մայրենի լեզուն պէտք է լինի հիմք, իսկ ռուսերէնը նորա վերայ հաստատած շէնք»***): մենք մանրամասնութեան մէջ չենք մտնում—մեզ ինչ որ պէտք էր՝ նա էլ ճշտութեամբ քաղուածօրէն արտագրեցինք. միայն մեզ համար տարակուսելի է և անհասկանալի՝ թէ ինչո՞ւ պ. մանկավարժը հէնց իր պահանջած չի կատարում. ինչո՞ւ հիմքը չդրած պատերն է շարում. ինչո՞ւ I տարուայ համար չի տալիս ձեռնարկ, այլ III տարուայ. չէ՞ որ իր III տարուայ առաջարկածը արդէն ռուսերէնին ծանօթ մանուկների համար է: Մենք այդ մասին կրկին կը դառնանք իր տեղում:

Մի փորձուած ու հմուտ ուսուցչի կարծիք ևս. Խօսելով Աղքերմանի և այլ տաճկական հայերի մասին ասում է. «Ասոր միակ միջոցը կրթութեան

МАТІЯ ДІЯ АРМЯНЪ. І КНИЖКА բացատրութիւններով. Թիֆլիզ, 1907 թ. III տարուայ համար, Ս. Մ.-ի.

*) Մենք ենք ընդգծում կատարեալ զօրութեամբ խօսքերը. ինչպէս հասկանալ կատարեալ զօրութեամբ. երեւի իմաստի հարազատ թարգմանութեամբ.

***) Նոյն գրքի 6 երես.

****) Նոյն գրքի 9 երես:

ընդհանուր ծաւալումն է. ուրիշ խօսքով այն ժամանակ միայն կը յաջողի այս, երբ որ հայկական կրթութիւնը ստիպողական լինի ամեն տեղ. ինչպէս որ ասոր մէկ պարզ արդիւնքը տեսնուեցաւ վերջերս նոյն իսկ բոլորովին թրքական հայերու մէջ. այսպէս Պրուսայի, Կեսարիոյ, Եօզղատի մէջ և ուրիշ տեղեր բացուած հայ վարժարանների շնորհիւ հայերէն խօսող երիտասարդների թիւը բաւական շատացած էր» *):

Մենք բաւականանում ենք բերուած օրինակներով. որովհետեւ իրար հակասող անվերջ կարծիքներով չենք ցանկանում ընթերցողին ծանրաբեռնել. յիշուածներից պարզ երևում է երեք որոշ աւանդման եղանակներ կամ հետեւողութիւններ:

ա) Մեծամասնութիւնը պաշտպանում է հետեւեալ հայեցակէտը. օտար լեզուն աւանդելիս պէտք է մայրենի լեզուն **): հիմք ընդունել:

*) Տես էմին. Ազգ. Ժող. հատ. Գ. 1902 թ. երես 44. աւագ ուսուցիչ եւ լեզուաբան Հ. Աճառեան.

**) Ուրեմն այն դպրոցների հայ սաները, որոնք իւրացրած են իրանց ծնողներից վրացերէնը, տաճկերէնը, չերքեզերէնը. դա ուզենք չուզենք պէտք է համարենք նոցա մայրենի լեզուն. զոնէ ժամանակաւորապէս. իսկ պ. Մ.-ի պահանջով այդ տղաների համար մէկը կամ միւսը հիմք ընդունելով պէտք է ռուսերէն սովորեցնել. իսկ որովհետեւ այդ տղաների համար հայերէնն էլ օտար լեզու է համարուում, ուստի իր մայրենի լեզուն հիմք ընդունելով՝ այսինքն վրացերէնը, տաճկերէնը, չերքեզերէնը. պէտք է սովորեցնենք հայերէն լեզուն. պ. Մ. տալով հայախօս մանուկներին ռուսերէնի III տարուայ ձեռնարկ՝ երեւի շուտով էլ կը հրատարակէ՝ միայն թէ բնական մեթոդով՝ վրացախօս, տաճկախօս, չերքեզախօս մանուկների համար III տարուայ հայոց լեզ. ձեռնարկ.

բ) Երկրորդ կարգի մանկավարժները պահանջում են ընդունելով մայրենի լեզուն հիմք՝ անցնել թարգմանօրէն, բայց զգոյց կերպով էլ աւելացնում են. որչափ կարելի է հեռու մնայ մայրենի լեզուից օգտուել. սա ասել է մասամբ հեռանում են թարգմանութեան զաղափարից և մի քանի աստիճանով էլ մօտենում են բնականին. այդ մի փոքր յառաջադիմութիւն է օտար լեզուի աւանդման գործում. ասել է միջին ճանապարհը բռնելով տալիս են մեզ երկու որոշ զաղափար — թարգմանօրէն սովորեցնելը ընդունում են անպէտք. իսկ որովհետեւ բնական ձևը դեռ շատ թոյլ է, դորա համար պէտք է նեղ ընկած միջոցին մայրենի լեզուից օգտուել, որպէս զի ուսուցման գործը առաջ գնայ. իսկ մեզ համար ամենաէականը այս է, որ նոքա, թարգմանօրէն պահանջողները զգուշացնում են հեռու մընալ մայրենի լեզուից օգտուել՝ որչափ հնարին է:

գ) Տեսակի մարդիկ աննշան՝ գուցէ ամենաչնչին մասը հրաժարուում են ամեն տեսակ թարգմանական ձևերից և միայն աւանդելի օտար լեզուն աչքի առաջ ունին իրրեւ ուսուցանելի առարկայ, որը իր բնական զարգացման ճանապարհով աշխատում են առաջ տանիլ ուսուցման գործը՝ միանգամայն դժուար աշխատանք, սովորութիւն ու պահանջող հետեւողութիւնով: Ինչո՞ւ մենք վերջինն ենք պահանջում: Թարգմանօրէն օտար լեզու սովորեցնելուն իր բոլոր ձևերին ու աւանդուած եղանակներին մենք աշակերտական սեղանից զզուանքով ենք նայել և միանգամայն երգուած թըշնամի ենք:

Բայց լաւ կը լինի մի համառօտ և ամփոփ հայ-

եացք էլ ձգենք ներկայ դպրոցների համար օտար լեզուի աւանդման մասին:

Այո՛, այսօր փաստ է՝ որ այլազգի միջնակարգ, Խրիմի գերմանական դաղոյթները—կորոնեաները՝ ինչպէս և նոցա հարեան թաթարների, քարայրիմների, մեր թէ ծխական, թէ թեմական դպրոցների պատրաստականներից սկսած տիրող կամ պետական լեզուն աւանդում են մեծ խնամքով ի հարկէ թարգմանօրէն, և ո՞վ գիտէ դեռ քանի երկար տարիներ պէտք է շարունակուի այդ ապարդիւն դործը իր շատ քիչ տուած պտուղներով. միայն մեզանում կովկասում թէ և Ռուսաստանի աչքի ընկնող կենդրոնական ուսման վայրերում արդէն սկսել են եւրոպացիներին հետեւել:

Ռուսաց թէ՛ քաղաքական, թէ՛ միջնակարգ և թէ՛ հոգևոր թեմական ու վաճառականական դպոցներում Ֆրանսերէնը, գերմաներէնը, յունարէնը, լատիներէնը, երկար տարիներ՝ այն էլ մեծ խնամքով աւանդուել են և աւանդուում են հրաւիրուած մանկավարժ ուսուցիչների ղեկավարութեամբ, որոց համար ամեն տարի պարբերաբար հազարներ են ծախսուում, բայց նոյն իսկ իրանց դպրոցական վարչութիւնների կողմից հաւաքուած տեղեկութիւնները և իրանց տուած վկայութիւնները հաստատում են, որ իրանց գաւակները 7 տարի կեանք մաշելուց յետոյ դարձեալ ցանկալի առաջագիժութիւնը ցոյց չեն տալիս. աչքի առաջ ունին մեծամասնութիւնը: Չեն կարող օտար լեզուով իրանց մտքերը ազատ արտայայտել *):

*) Մենք այդ մասին շատ փորձուած ուսուցիչների հետ առիժ

Ամեն մի բարեխիղճ ուսուցիչ պէտք է վերջապէս ձայն բարձրացնէ, որ գործնական մարդիկ ենք տալու կիանքին. ժամանակ է՝ որ վկայեն թէ թարգմանօրէն օտար լեզու աւանդելով մենք լեզուի տեսակետով կեանքի մէջ ենք շարտում անղէնք էակներ:

Մեր խօսքը նոցա չի վերաբերում, որոնք որեւիցէ ճանապարհով այս կամ այն օտար լեզուն իւրացրել են. օրինակ ճեմարանի սաներից նոքա, որոնք եկած էին Տաճկաստանից՝ քիչ բացառութեամբ գիտէին Ֆրանսերէն խօսել ու կարդալ *), իսկ նոցա ընկեր Երեւանցին, Ախալքալակցին դեռ տառ ճանաչելը նորա հետ նոր պէտք է սովորիր. հասկանալի է, թէ առաջինների և թէ վերջինների զրութիւնը այնպէս, ինչպէս Բեսարաբիայի կամ Աստրախանի կողմերից եկած աշակերտները, որոնք միշտ էլ իրանց ընկերներից (Ապարանցիներից, Վաղարշապատցիներից) բարձր են եղել ուսաց լեզուի մէջ և մինչև այսօր էլ նոքա աչքի են ընկնում:

ենք ունեցել խօսելու. շատերից մինի կարծիքը՝ Պ. Ս. Կանայեանց Գ. ձ. գերմաներէնի ուսուցիչը՝ ինքը Գերմանիայում սովորած այսպէս է ձեւակերպել իր պատասխանը. «Մեր եւ հիմ նարկութեան նպատակը չէ խօսել սովորեցնել՝ վաճառականներ պատրաստել՝ այլ այնքան պաշար տալ սանին, որ կարողանայ գերմաներէն գրել՝ կարդալ եւ հասկանալ. մենք պատասխանում ենք, եթէ երեսան կարող է խօսուն հասկանար. նախ գործնական եւ ապա տեսական»:

*) 1885—6 թուին նկատել ենք Գ. ճեմարանում այն ժամանակ ֆրանսերէն էին աւանդում այժմեան գերմաներէնի փոխարէն, որը մուտք է գտել Գ. ճեմ. 1896-ին:

Այդ ուշադրաւ երեւոյթը ունի իր հիմնական ու անվիճելի պատճառը. Աստորախանի, Նոր-Նախիջևանի, Սիմֆերոպոլի, Օդեսայի, Աղքերմանի հայ օտարացած մանուկները փոքր հասակից սնուում ու մեծանում են ուս տարրի հետ. նոցա մանկական ընկերները ուս երեխաներն են, որոց նիստ ու կացը սովորութիւնները խաղերը և այլն միանման են. հայկական ոչինչ չէք տեսնում, նոյն իսկ հայ ընտանիքներում. մեր խօսքը ընդհանուրին է վերաբերում: Ուրեմն պարզ և հասկանալի է գործնականի նշանակութիւնը—գորա շնորհիւ է, որ նոքա լաւ ուսերէն խօսել զիտեն, իսկ դորա վերայ աւելացրէք և մի քանի երկար տարիների ուս լեզուի ուսումնասիրութիւնը դպրոցներում և դուք կատարեալ կերպով մեզ հետ կը համաձայնէք, որ այդպիսիները աւելի շուտով կարող են ուս ուսանողների հետ մրցել և միշտ էլ նոցանից յետ չեն մնացել կեանքի մէջ:

Տաճկաստանից եկողների մասին իրանցից լսած այսքան կարող ենք ասել, որ մեր տաճկահայ ընկերները ընդհանրապէս լեզուների վերայ աւելի ուշադրութիւն են դարձնում: և աւելի հաւանական է, որ նոքա էլ փոքր ժամանակից խառը տարրերի հետ ապրելով սովորում են զանազան լեզուներ. օր. Տրապիզոնից եկածները զիտէին և յունարէն, Բայց կրկին շեշտելու ենք, որ նոքա թարգմանօրէն չեն սովորել այլ գործնական լեզուի զարգացման ճանապարհով են սովորել օտար լեզուն:

Ռուսաց բարձր և միջին դասակարգի մէջ բաւական ժամանակ է, որ մտել է Ֆրանսերէն զիտնալու

ցանկութիւնը գուցէ և կարիքը. հէնց յատկապէս այդ նպատակին հասնելու համար հրաւիրում են պատրաստի Ֆրանսերէն լեզուի ուսուցիչներ ու դաստիարակչուհիներ, որպէս զի փոքր հասակից երեխաների հետ Ֆրանսերէն խօսին: Երկար տարիներից յետոյ այդպիսի ընտանիքներից դուրս եկած աշակերտները իրանց դպրոցներում աչքի են ընկնում որպէս առաջադէմ աշակերտներ, քան թէ նոքա որոնք հէնց մտած օրից նոր պէտք է ծանօթանային Ֆրանսերէն լեզուի հետ: Եթէ զիմնադիայում աւանդուում է գերմաներէն և եթէ միեւնոյն դասարանում կան գերմանացիներ՝ կասկած չկայ, որ գերմաներէնի դասին միայն գերմանացի աշակերտներն են դեր խաղում, եթէ իրանց լեզուն չեն մոռցած:

Վերջին ժամանակում մեր հայ բարձր ընտանիքներում նոյն սովորութիւնը կամաց-կամաց սկսել է առաջադիմել. վարձում են ուս աղախիններ իրանց տղաներին ուսերէն սովորեցնելու մտքով և այդ նոցա բաւական յաջողուում է:

Շատերի համար պարզ չէ, որ բազմի բերմամբ հէնց թեմական կամ ծխական դպրոցների դասընթաց վերջացնողներից շատերը՝ երբ ընկել են Ռուսաստանի խորքերը ուր և բաւական ժամանակ ապրել ուս ժողովրդի հետ, նոքա իւրացրել են կենդանի լեզուի խօսակցութիւնը. և որովհետեւ այդպիսիները տեսականի հետ էլ մի քիչ առաջուց ծանօթ են եղել, դորա համար էլ նոքա աւելի շուտ ու մաքուր խօսել են սովորել քան թէ իր նոյն հայրենակիցը, որը գրել կարգալ ամենեին չէր սովորել:

Վոլգայի ափում ապրող ցրուած պարսկահայա-
տակ հայը, Հին-Նախիջևանցին, Թմբուլ գիւղացին-
երևանցին և այլն բաւական յաջող կարող են ռուսե-
րէն խօսել. մենք աւելին կասենք—նոյն իսկ կանայք
աւելի ազատ ու մաքուր են խօսում: Ինչո՞ւ. որով-
հետև ամեն մի տան կայ մի կամ երկու ռուս աղա-
խին, որոնք դաստիարակչուհիներն կամ բան անող
ծառանների պաշտօն են վարում: մինչև անգամ իրանց
նիստ ու կացը սովորեցնում. ո՞ւր մնաց, որ նոցա զա-
ւակներին էլ իրանց լեզուն են սովորեցնում: հարկաւ
երբ մեծանան—որդիքը կամ աղջկեքը իրանց ծնող-
ներից շատ ու շատ լաւ պիտի խօսին և արդէն գի-
տեն էլ. մենք տալիս ենք զուտ ճշմարտութեան նմուշ-
ներ. գուցէ յիսուն տարի անցնելուց յետոյ իրանց
հայ լեզուն էլ մոռանան և հայ լեզուի վերայ մի մեծ
սև խաչ էլ դնեն. արդէն նշանները երևում են, հար-
կաւոր է ուշադրութիւն դարձնել, որ գոնէ հայրերը
ու մայրերը իրանց զաւակների հետ հայերէն խօսին,
եթէ հայ լեզուն իրանց համար թանգ է, որպէս ազ-
գային լեզու. մոռացածներին պէտք է մկրտել, այլա-
սեռման առաջը պէտք է առնել, թէև գործնականի-
ու ժեղ ազգեցութիւնը ուղղակի արտափայլում է
յիշուած գէպքերում, որոնք քիչ չեն:

Փաստ է, որ Գ. Ճեմարանի սաներից շատերը որ-
ևիցէ ճանապարհով սովորել են գերմաներէն, ֆրան-
սերէն, ռուսերէն և մինչև անգամ կարող են շատ
լաւ խօսել նոյն լեզուով. պարապում են թարգմա-
նութիւններով, ինքնուրոյն աշխատութիւններ են հը-
րատարակում մշակելով ու օգտուելով օտար աղ-

բիւրներից և այդ ամենը շնորհիւ նորա, որ նոքա մի-
քանի տարիներ գործնականի հետ կեանք են մաշել
Գերմանիայում *) և այլն:

Իստուալով մեր առաջի հարցին հակառակ կեր-
պով ցոյց տուինք, որ ռուսաց միջնակարգ դպրոցների
աշակերտները մի որևիցէ օտար լեզու դպրոցում թարգ-
մանօրէն սովորելով չեն կարող իրանց նպատակին հաս-
նիլ. այսինքն նոքա ֆրանսերէն, գերմաներէն, յունարէն,
լատիներէն խօսել չգիտեն. չեն կարող օտար լեզուով
իրանց միտքը ազատ արտայայտել. ասել է կեանքի
մէջ նոցա թարգմանօրէն սովորածը ո՛չ մի արժէք
չունի. այնպէս՝ ինչպէս մեր թեմական դպրոցների դա-
սընթաց վերջացնողները ռուսերէն խօսել չեն կարող.
ինչպէս և գերմանացիները, թաթարները **) չնայելով,
որ նոքա էլ իրանց դպրոցներում երկար տարիներ
ռուսերէն են սովորում թարգմանօրէն, մենք տեսնում
ենք, որ ցաւը ընդհանուր է:

Բնականաբար ընթերցողի մէջ հարց է զարթ-
նում. արդեօք ինչն է՞ պատճառը. մենք դորա պատ-
ճառը վերևում տեղ-տեղ դրական և բացասական

*) Գերմանիայում հայ ուսանողներից շատերը, որոնք օտա-
րութեան մէջ հայկական շրջանում են ապրել, նկատուած է, որ
լեզուի մէջ թող են. համեմատած իրանց այն ընկերների հետ, ո-
րոնք գերմանական ընտանիքներում են ապրել. կասկած չկայ՝ որ
վերջինը ունի իր առաւելութիւնները:

**) Կառավարութիւնը Խրիմի թաթարների համար ամեն մի
գիւղում գանձարանի հաշուով պետական միադատեան (երեք տա-
րուայ) եւ երկդատեան (հինգ տարուայ) դպրոցներ է բաց արել եւ
գեւ շարունակում է:

կողմերով ցոյց տուինք: Հակառակ մեր ցանկութեան, մի քիչ էլ երկարացրինք, մի քանի միանման օրինակներով՝ դուցէ և յետոյ էլ մենք պատահենք այդ տեսակ համոզիչ փաստերի, բայց և այնպէս մեր պարզ եզրակացութիւնը կամ պատասխանը այս է. հայ ռուս, գերմանացի, հրէայ մանուկը օտար լեզու չը գիտէ միայն գործնականի բացակայութեան պատճառով և կամ օտար լեզուն իր բնական զարգացման աստիճաններով չէ առաջ գնացել. իսկ դպրոցում բռնական ձեռով չէ աւանդուել: Նախ գործնականը և ապա տեսականը, որոնք միշտ զուգընթացաբար միեւնոյն հետեւողութեամբ պէտք է առաջ տանել:

Մանկան համար անդնահատելի նշանակութիւն ունի, երբ նա իրա համար նախատեսնուած օտար լեզուն ուսուցանելիս լսէ և՛ ընտանիքում, և՛ բազմիսում և՛ թատրոնում և՛ եկեղեցում օտար լեզուի կենդանի խօսակցութիւնը, իսկ դպրոցում միանգամայն անպայման պահանջ է իր բազմակողմանի վարժութիւններով: Բայց խեղճ երեխան ընդհակառակը շատ քիչ է լսում, միայն դասարանի փակուած չորս մերկ պատերի մէջ է կարդում ու թարգմանում: Լեզուն բանտարկուած է, քանի որ բառի բուն նշանակութեամբ գործածականը չկայ և չէր էլ կարող լինել: Շատ հաւանական է սանը խօսքի պաշար շատ է ամբարում, բայց նորա լեզուի կապանքները չեն քանդուած. նա չի կարող նախադասութիւններ հիւսել գիտցած խօսքերից. նա իր գիտցածի տէրը չէ. նա չի կարող խօսքերի հետ խաղ անել այնպէս՝ ինչպէս մի հմուտ արհեստաւոր կարող էր խաղալ իր ձեռքի

առարկայի, ժամացոյցի կամ կօշիկի հետ հաղար անգամ շուռ տալով այս ու այն կողմը:

Ի՞նչ ասել է գործնական լեզու գիտենալ:

Սահմանափակ մտքով վերցրած գործնական լեզու գիտենալ մենք այսպէս ենք հասկանում. վարժ խօսել և յետոյ անսխալ գրել ու կարգալ: Ի հարկէ, որոշ հասակի աստիճանները մենք անպայման աչքի առաջ պիտի ունենանք: Վերջապէս մեր հասկանալը ոչ մի արժէք չունի. այլ կեանքը այդպէս է հասկանում և այդպէս էլ պահանջում:

Մեր կարծիքով եթէ մինը գիտէ օտար լեզուով գրել, կարդալ, հասկանալ, այդ դեռ չի նշանակում, թէ նա տիրում է նոյն լեզուին. մինչև անգամ մեզ թուում է, թէ քչերը միայն կարող են ասել՝ նոյն իսկ եթէ խօսել էլ գիտեն, թէ ես այս լեզուին տիրում եմ, որովհետև Տիրել խօսքը մենք հասկանում ենք իր լայն ու ընդարձակ իմաստով. այդպիսիներին մենք կանուանելինք մասնագէտներ կամ լեզուաբաններ, որոնք շատ և շատ քիչ են:

Բայց կեանքը մեզանից պահանջում է առաջինը՝ սահմանափակ ձեռք:

Գուցէ մանկավարժների հասկացողութիւններին կամ կանոններին մեր ասածները չեն համապատասխանում. գուցէ և տարօրինակ կը թուի, այդ ամենը կընդունենք, բայց և այնպէս մենք գործնականին առաջի տեղն ենք տալիս և այդ ամենը պարզ բացատրեցինք, թէ ինչու համար:

Թող կրկնութիւն չըլինի եթէ ասենք, որ վրացու հետ խօսելիս, նա քեզ չի հարցնում, թէ դու

վրացերէն գրեր կարդալ զիտե՞ս. կամ կարդացածդ կը հասկանա՞ս. այլ ուղղակի կըսկսի խօսել. իսկ երբ պատասխան չըստանայ կասէ՛, որ դու վրացերէն չգիտես. զոնէ այդպէս կը մտածէ մի րոպէ: Իսկ պետական լեզուի համար աւելորդ է յիշել: Ռուս ժողովուրդը չի սիրում ուրիշ լեզուի հետ ծանօթանալ, նա այնպէս է կարծում, թէ բոլորն էլ պարտական են իր լեզուն զիտնալ, իսկ ինքը եթէ տասը վրացու հետը ապրի դարձեալ իր լեզուով կըսկսի խօսել *) և այդ շատ վատ նշան է: Կ. Պօլսում եղած միջոցիս ինչ ո՛չ մի օսմանցի չը հարցրեց, թէ դու տաճկերէն գրել, կարդալ զիտե՞ս: Նա բաւականանում էր, որ ինչ հասկանում էր, իսկ ես գոհ էի, որ կարող էի առանց գրել, կարդալու իմ մտքերը հաղորդել և իմ ցանկացածները պահանջել ու ստանալ:

Մեր ասածներից ընթերցողները կարող են եզրակացնել և իրաւունք էլ ունին հարցնելու, թէ ուրեմն օտար լեզու սովորելու համար մի՞թէ անպատճառ պէտք է նոյն ժողովրդի մէջ ապրել. մենք կը պատասխանենք անպայման. աւելացնելով մինչև անգամ փոքր հասակից, եթէ այդ հնարաւոր է և անհրաժեշտ:

Ասացէք խնդրեմ, յարգելի տեսուչներ և ուսուցիչներ. մի՞թէ մեր ճեմարանի ներկայ սաների բուն ցանկութիւնը նոյնը չէ՞ հաստատում. քանի-քանիսը ամառուայ արձակուրդի ամիսներին գնում են դէպի այն կողմերը, ուր կայ ուսուցողները, ուր լսուում

*) Օր. այդ բանը նկատուած է զօրքի մէջ. դրացիութեան շրջանում, արհեստանոցներում. բանուորական շրջանում.

է ամեն րոպէ ուսուցողու կենդանի լեզուն իր բոլոր նրբութիւններով, կեանքի բուն արտայայտութիւններով. աշակերտները դորանով ապացուցանում են, որ աւանդած ձեւից օգուտ չեն ստանում. նոքա ապացուցանում են, որ կարիք ունին ծանօթանալու, սովորելու կենդանի լեզուն՝ կենդանի մարդկանցից. նոցա բազմա կապուած լինելով Ռուսաստանի կուլտուրական կեանքի հետ, նոքա ցանկանում են պետական լեզուով ազատ խօսել. այդ իրանց դեռ աշակերտական նստարանից եռացող կեանքն է յուշարարում, որպէս զի կարողանան կեանքի ալիքների հետ անվեհեր մաքառել. սա հացի և գոյութեան խնդիր է. նոքա իրաւացի կերպով ուզում են պետական համալսարանների—կրթութեան սուրբ տաճարների ազատ դռներից պարզ ճակատով ներս մտնել. դորա համար նոքա հոգով ու մարմնով համոզուած են, որ անպայման պէտք է զիտենան ուսերէն լեզուն մաքուր ու ազատ խօսելը այլապէս նոքա չեն կարող իրանց մտքերի ընդարձակ հասկացողութեամբ ու զիտակցական յիշողութեամբ հաղորդել այն ամենը, որոնք նոքա տասնեակ տարուայ ընթացքում սովորել են:

Այո՛, մի անգամ էլ համոզական ձեռով կրկնում ենք. դերմաներէն սովորողը պէտք է գերմանացիների հետ ապրի, եթէ հնարին է կամ գերմանացի հմուտ ուսուցիչ պէտք է ունենայ *) գործնականի համար տեսականի հետ անբաժանելի:

*) Անցեալ 1906|7 ուսումնական տարուայ սկզբին Գ. Տեմարանի հ. տեսուչ Մեսրոպ վ.-ը յայտարարել էր. «ճեմարանի համար հարկաւոր են լաւ ուսերէն ազատ խօսող վերակացուներ»

Բայց որովհետև կեանքում — աշխարհումս բազմա-
 դաւորներին թիւը շատ քիչ է և հազարից գուցէ
 10-ին հազիւ յաջողուի գնալ բուն ժողովրդի մէջ՝
 այն էլ լեզու սովորելու համար և մինչև անգամ այդ
 երևոյթը երազ կարելի է համարել, դորա համար
 պէտք է հեռուն մօտեցնել, այն է մտցնել բնական
 մեթոդը մեր դպրոցներում ու ընտանիքներում, որի
 տուած յաջողութիւնը անկասկածելի է: Ինչպէս շատ
 գաղտնիքներում, այնպէս էլ այստեղ բնութիւնը որ-
 պէս մի հմուտ կենդանի ուսուցիչ արդէն ցոյց է տուել,
 թէ կենդանիք իրանց ձագերին — իրանցից ճնուածնե-
 րին ինչպէս են սովորեցնում: մարդն էլ լինելով կեն-
 դանի արարածների ամենախելացին, պէտք է նոյն ճա-
 նապարհով գնայ — ոչ միայն տանը այլ և դպրոցում:
 Բնական ձևով լեզու սովորեցնել օտար մանուկ-
 ներին շատ էլ հեշտ ու թեթեւ բան չէ. դորա համար
 անհրաժեշտ է ունենալ սէր դէպի գործը, ուսուցիչը
 բառի կատարեալ հասկացողութեամբ լինելու է համ-

եւ ունեցաւ Նպատակն էր սաներին կենդանի լեզուի հետ ծանօ-
 թացներ, ընտելացնել, Բայց ի՞նչ արին, որչափ օգտուեցան, ի՞նչ
 ձեւով պարագեցան, չգիտենք, Յանկալի էր իմանալ: Այդպիսի մի
 փորձ իր ժամանակին ֆրանսերէնի նկատմամբ Գեր. Գ. արքեպիս-
 կոպոս Այվազովսկու տեսչութեան օրով Խալիպեան դպրանոցում
 (Թէոդոսիայում) է եղած եւ ինչպէս լսել եմ անձամբ — հասակա-
 լոր սաներից, մեծ յաջողութիւն են ունեցել գործնական ճանա-
 պարհով եւ մինչև անգամ փայլուն առաջադիմութիւն են ցոյց տուել
 աշակերտները, տարիներ են անցել՝ բայց սաներից շատերը դովա-
 սանքով են յիշում անցեալը, Շատերը լաւ էլ պաշտօններ են գտել:

բերող, տոկուն, եռանդոտ, առողջ հոգու մէջ լինե-
 լու է ներքին ոգևորող ոյժ, բարձր կրթութիւն ստա-
 ցած մասնագէտ անձն, խելացի կերպով գործին նուր-
 բուած կայտառ և անպայման պահանջող ու հետե-
 ւող ուսուցիչ:

Այո՛, մեր թուածները այնպիսի յատկութիւններ
 են, որոնցից զուրկ են շատ շատերը, թէև գործում
 են. նոյն խակ բնութիւնը մեզ — տղամարդկանցօ
 որոշ չափով զրկել է այդ վսեմ յատկանիշներից, եթէ
 կարելի է այդպէս ասել: Դորա համար էլ մենք ցան-
 կանում էինք այդպիսի մի փափուկ, դժուար ու պա-
 տասխանատու գործ յանձնել համապատասխան կոչ-
 ման պատրաստի կանացի սեռին (ինչպէս ամերիկա-
 ցիք են արել), որոց մէջ կարծես Նախախնամութիւնը
 առատ է պարգեւատրել այդ յատկութիւնները որպէս
 կաթ տուողների, սնուցանողների, մեծացնողների և
 կրթողների: Այո՛, խելացի մայրերը միշտ էլ ժողովր-
 դին յայտնի մարդիկ են տուել:

Այժմ տեսնենք թէ նորածին երեխան ինչպէս է
 իւրացնում իր մայրենի լեզուն. աւելի հեշտ արտա-
 յայտած կը լինինք, եթէ ասենք այն բարբառը, որը
 փոքր հասակից՝ օրօրոցից նորա ականջը լսում է ու
 լսում, որպէս ապագայ մայրենի կամ ազգային անուա-
 նուած լեզու. դորա համար է, որ երեխայի համար
 ճիշտ մտքով մայրենի լեզու չկայ, քանի որ նա միև-
 նոյն հասակում ընդունակ է զուգընթացաբար սովո-
 րելու մի քանի լեզուներ, Գուցէ շատերը անպայման
 կամենում են ու պահանջում որ նախ իրանց լեզուն
 սովորի և ապա օտարինը, կամ շատերը հէնց այդ-

պէս էլ են անուամբ որը շատ բնական է, նախ սովորեցնում են իրանց լեզուն: Մենք ոչ մէկին էլ հակառակ չենք, թող ամեն ոք անէ այն, ինչպէս կը ցանկայ. միայն թէ մի րոպէ ընդունենք, որ երեխան սեպհական լեզու չունի, այդ մեզ համար շատ կարևոր է. այդ բնական ձևի հիմքն է, որի վերայ պէտք է շէնքը կառուցանենք: Երեխան բնականաբար տարիների ընթացքում լսածը պէտք էր բնութեան սահմանուած օրէնքների հիման վերայ իւրացնէր. ահա այդ աչքի առաջ ունենալով ասում ենք, նա մայրենի լեզու չունի. մի անուրանալի՝ անժխտելի իրականութիւն է, որ երեխան իւրացրածով էլ կը խօսի նորա կամ նոցա հետ, որոնցից իւրացրել էր: Քիչ է պատահել, որ երեխան մօրից ծնուած օրից որք է մնացել և նորան խնամել է մի օտար կին. նա սնուել, մեծացել, խօսել և իւրացրել է իրան խորթ, բոլորովին օտար լեզու (մօր համեմատութեամբ), որը եթէ կենդանի լինէր բնականաբար կը սովորեցնէր օր. Ֆրանսերէն, իսկ որք, հասակ առած մարդը խօսում է օր. ռուսերէն: Որքի մայրենի լեզուն ոչ թէ ռուսերէնն էր. այլ Ֆրանսերէնը: Առաջին փաստ:

Եթէ ունենայինք մի մօրից երեք ծնուածներ և եթէ մայրը զիտենար օրինակ ռուսերէն, հայերէն և վրացերէն և եթէ մայրը իր համար զիտակցարար ընդունէր, որ երեքի հետ էլ առանձին առանձին լեզուով խօսէր, վերջը պիտի ունենայինք մի մօրից ծնուած երեք քոյրեր կամ եղբայրներ, երեք տարբեր մայրենի լեզուներով: Անբնական կը լինէր, եթէ այդպէս չը լինէր. մենք տալիս ենք իրական մի կենդանի փորձ էլ:

Եթէ իմ երեխաները տարիների ընթացքում չունենային ռուս աղախիններ կամ ռուս հարևան ընկերներ, որոց հետ ամեն մի քայլափոխում հնարաւորութիւն չունենային ռուսերէն լսելու ու խօսելու. եթէ նոյն երեխաների հետ հայրը և մայրը զիտակցարար օտարութեան մէջ իրանց ազգային կամ մայրենի ընդունած լեզուն չսովորեցնէին, հետները հայերէն չխօսէին և եթէ հանգամանքների շնորհիւ տան միւս տաճկախօս անդամների հետ (ուրիշ լեզու չը զիտնալու պատճառով) ստիպուած տաճկերէն չը խօսէին, պարզ է, որ նոքա միւսնոյն ժամանակ՝ միւսնոյն հասակում երեք լեզուներով էլ չէին կարող խօսել և հասկանալ. այն ինչ իմ գրածը կենդանի և անհերքելի փաստ է:

Եզրակացութիւնը պարզ է, որ կամայ թէ ակամայ հաշտուելու ենք այն մտքի հետ, թէ տաճկախօս վրացախօս, չերքեզախօս երեխայի համար իր մօրից իւրացրածն է նորա մայրենի լեզուն. քանի որ մայրենի՝ ազգային լեզու ընդարձակ մտքով չկայ. այլ կայ այս մտքով, որ մենք մեր զաւակներին բնական ճանապարհով սովորեցրել ենք մեր ժառանգական լեզուն—մեր ծնողների, պապերի և նոցա սերունդներից մնացած լեզուն, որը կրել է, կրում է և պիտի կրէ ազգային կամ մայրենի լեզու անունը:

Երկրորդ. մենք փորձուած պարզ օրինակներով ապացուցինք, որ երեխային միւսնոյն ժամանակ և միւսնոյն հասակում կարելի է սովորեցնել նոյն բնական եղանակով մի քանի լեզուներ: Այդ կարևոր կէտը շեշտեցինք նորա համար, որ շատերը համոզուած են,

Թէ օտար լեզուներ միասին սովորելիս արդելք է դառնում մայրենի լեզուին կամ խանգարում: այդ հասկացողութիւնը միանգամայն անհիմն է, դոնէ փորձի առաջ:

Այդ հասկում երեխայի միտքը, յիշողութիւնը և բոլոր հոգեկան կարողութիւնները այնքան վառ են՝ այնքան թարմ, որ ամեն մի առարկայի անունը յետոյ և հետո էլ առարկան տեսնելով, պատկերը միացնելով երեխան իր յիշողութեան մէջ՝ արդէն թոյլ կերպով կը տպաւորէ. դարձեալ մի երկու անգամ կը տեսնի ու կը լսէ, այդ իրան բաւական է. այնուհետեւ ինքը կարող է գործածել նոյն խօսքը իր իմաստի մտքով գուցէ և իր բոլոր նրբութիւններով, իսկ վերացական առարկաներ լսելիս, նա չի էլ հետաքրքրուում: և այդ տեսակ խօսքերը իրանց դադափարներով շատ երկար ժամանակ անբացատրելի կը մնան մինչև հասունանալը:

Մեր ասածներից պարզ հետեւում է, որ ամեն մի երեխայ իր շրջապատում, ընտանիքում սովորում է իր ծնողների բարբառի կամ լեզուի զննակալն մասը գործնական եղանակով. այսինքն առարկան շատ և շատ անգամ հարկաւոր դէպքում ցոյց են տալիս և նոյնքան էլ առարկայի անունը ականջին հնչեցնում: ու այդպէս լսելով, տեսնելով ու անվերջ կրկնութիւններ անելով, ինքը երեխան աստիճանաբար հետեւելով մեծերին իր իւրացրածներից, խօսքերից՝ շինում է մտքեր ու այնպէս էլ արտայայտում. ապա գործը բարդացնում ընդարձակ նախադասութիւններով և վերջի

վերջոյ ազատ խօսում հասնում է մանկան յատուկ շատախօսութեան աստիճանին, այսինքն մի բան շատ անգամ է հարցնում:

Միջանկեալ այս ևս պէտք է զիտենանք, որ հոգեբանների ու մասնագէտ մանկավարժների զրուածքներից կարելի է ցոյց տալ, որ մանուկը ծնուած օրից դեռ ընդունակ չէ մտապատկերներ ընդունելու, ո՞ր մնաց ըմբռնելու: Նորա օրգանական և հոգեկան կարողութիւնները—միտքը, յիշողութիւնը, ընդհանրապէս բոլոր կազմուածքը այնքան թոյլ են, որ չեն կարող դանազան առարկաների մտապատկերները իրարից ջոկել:

Թէև կան մարդիկ էլ, որոնք պնդում են, թէ մանուկը ծնած օրից մի քանի շաբաթ անցած, ընդունում է խառը կերպով մտապատկերներ և այլն: Այդ ամենը մեզ համար միևնոյն է. մենք երեխային աչքի առաջ ունինք այն օրից, երբ նա ընդունակ է դառնում ընդունելու, սովորելու. և թէ ո՞րչափ է անցել ծնած օրից, մի ամիս, թէ մի քանի շաբաթ՝ այդ մեզ չի հետաքրքրում: Բայց փաստ է, որ մայրը մի երկու ամիս անցած, գուցէ և քիչ՝ ծնուածի վերայ ուշադրութիւն է դարձնում:

Գլխաւոր, սնուցանող մայրը արդէն կըսկսէ բնագրամամբ իր մեքենայական դերը կատարել. նպատակին հասնելու համար, այն է «երեխային լեզու հանելը» և աննկատելի կերպով շաբաթների ու ամիսների ընթացքում առանց շտապելու, աստիճանաբար գործը գնալով բարդանում է և վերջապէս հասնում է կէս նպատակին. մանուկը կսկսէ թօթովել. դարձեալ կանցնի

մի քանի ամիս, նա այժմս կը թոթովէ աւելի ազատ ու հաստատուն. մի քիչ ժամանակ էլ և նա արդէն խօսում է նայելով՝ թէ ծնուածի վերայ ի՞նչ չափով է ուշադրութիւն դարձրած և ում կողմից. հարազատ մօրից—թէ դայեակից—այնքան էլ շուտ կամ ուշ է լեզու հանում կամ խօսում:

Գորա համար չէ՞ որ մարդկութեան բոլոր ընտանիքներում մի առանձին դարձուածք է դործածուում: Անահիտը *) ՇԱՏ ՇՈՒՏ լեզու ելաւ, Վարդգէսը **) ուշ իսկ Մկրտիչը ***): ահա երկու կամ տարի ու կէս է դեռ չի խօսում:

Այդ ոչ պակաս կարևոր ու հետաքրքիր երեւոյթի պատճառը հետևող ծնողների համար շատ պարզ է. մեզ հետ շատերը կը վկայեն, թէ առ հասարակ «առջիններ» անդրանիկ զաւակը աւելի շուտ է սկսում խօսել. ապա երկրորդը՝ երրորդը՝ չորրորդը՝ հինգերորդը շատ բնական է, որ պիտի սովորի քոյրերից և եղբայրներից: Մօր հոգսերը, ծանրաբեռնուած ընտանեկան դործերը ստիպում են շատ անգամ անուշադիր թողնել ժամերով լալիս է երեխան, իսկ մայրը հազիւ ժամանակ է զտնում կաթ տալու՝ ո՞ւր մնաց հետը խաղալու:

Բացի դրանից որովհետև անդրանիկ զաւակը հօր ու մօր և մինչև անգամ տան միւս անդամների համար լինելով առաջին ուրախութիւնը, տան ծաղիկը, ամենքն էլ նորան կը զրկեն, ամենքն էլ

*) Անահիտը Ա. ծնունդ:

**) Վարդգէսը Բ. ծնունդ:

***) Մկրտիչը Գ. ծնունդ:

ձեռքից ձեռք ման կածեն. նա դառնում է ամենի համար էլ մի գրաւիչ սիկիմ. ուրեմն հասկանալի է, թէ մանուկը մի խօսք քանի ու քանի անգամ է լսում, առարկան տեսնում: Երեխայի 1—3 տարեկան հասակը այնպիսի մի ժամանակ է, որ օտարներն էլ նորանով են զբաղուում: Մեր թուածները զուտ ճշմարտութիւններ են, որոնք կազմում են բնական լեզուով լեզու սովորեցնելու հիմքի մի այլ լրացուցիչ կողմը:

Արդէն մեզ համար պարզուեց թարգմանօրէն օտար լեզու աւանդելու շատ աննշան ու չնչին օգտակարութիւնը, անբնական լինելը: Գորա հակառակ մեզ նոյնպէս երևաց դործնականի զօրեղ ոյժը կեանքում. տեսանք և ընտանիքում լեզուի զարգացման բնական աճումը աստիճանաբար, որի ժամանակ մենք համոզիչ ճանապարհով շօշափեցինք, որ կրկնութիւններով նոյնը հազար ու մի դարձուածքներով և տեսակ տեսակ ձեւերով առաջ է տարուում մայրենի—ծնողի՝ աղագային լեզուի ուսումը կամ ցանկացածինը: Այդ ամենը մեզ լաւ պատկերացնելուց ու ըմբռնելուց յետոյ, պէտք է նոյնութեամբ տեղափոխել դպրոց, ուր լեզուի զարգացման աստիճանները ի նկատի առնելուց յետոյ պէտք է գործը կամ շարունակենք կամ նորը սկսենք. հէնց դորա համար է, որ ասում են ընտանիքը դըպրոցի նախադուռն է. մենք դպրոցում, ոչ թէ 1, 2, 3, 4 տարեկան երեխայի հետ գործ ունենք, այլ 7—8 և այլն. որոնք որևիցէ լեզուով վաղուց զիտեն այն ամենը, ինչ որ պէտք էր. օրինակ նա իր ծնողի լեզուով զիտէ, սեղան խօսքը. թէ ինչից են շինում, ո՞վ է շինել և ինչի՞. զիտէ իր տեսակները, նոցա ձե-

ւերը՝ կոլոր, քառանկիւնի, քառակուսի եայլն, մը-
նում է զպրոցում կամաց կամաց նորան սովորեցնել օ-
րինակ՝ իրան օտար համարուած անունը «СТОЛ» :
Տաճկախօս մանուկը նոյնպէս շատ լաւ զիտէ տաճկե-
րէն «սոլ» խօսքը—նրան պէտք է սովորեցնել ջուր.
Թէ ինչի՞ համար է, ի՞նչ են անում այդ լաւ գիտէ: Ասել
է նա բաւական պատրաստութեամբ է մտնում զպրոց:

ՈՒՍՈՒՑՉԻ ՎԻՃԱԿԸ

Երբ Աղքերմանի հայոց երկսեռ միացած զըպ-
րոցների համար հրաւիրուեցայ հայոց լեզուի ուսու-
ցիչ, ինձ 60 սան էին հաւատացել՝ հայոց լեզու
սովորեցնելու համար: Հէնց առաջի դասին զգացի որ
գտնուում եմ անելանելի դրութեան մէջ: Խեղճ ան-
մեղ մանուկները՝ հայերէնից ոչ մի խօսք չըգիտէին. իսկ
ես էլ պէտք է նոցա սովորեցնէի իրանց մոռացած
լեզուն, բայց ի՞նչպէս, ի՞նչ ձևով:

Իբրև ուսուցիչ շատ էլ անփորձ չէի, քանի որ
նոյն առարկան երկու տարի աւանդել էի Աղքասան-
դրապոլի հայ զպրոցներից մէկում. բայց այսպիսի տա-
րօրինակ հագնամանքի առաջին անգամն էր, որ հան-
դիպեցայ: Առանց ժամանակ կորցնելու Ատիամանցի
Ա. Տէր Գ. -ի *) միջնորդութեամբ դիմեցի պ. մանկա-
վարժ Ս. Մանդիթեանին և նոր-դարի միջոցով խնդրեցի
ձեռնհաս փորձուած ուսուցիչների ուշադրութիւնը.
բայց ոչ մի կողմից և ոչ մի պատասխան չըստացայ:

*) Գ. ձ. III է ուսանող:

Телеграфъ»-ի*) 307. ԲԱՐԵՐԱՐ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Ստիպուած շարունակ կարդում էի ռուսերէն
մանկավարժական գրուածքներ և միշտ հետևում էի,
թէ իմ հարցերին որեւիցէ կերպով կարո՞ղ եմ պատաս-
խան գտնել: Ուսումնական տարուայ մի քանի ամիսը
անցել էր. ես ստիպուած պարապում էի թարգմա-
նօրէն: Մի օր կարդում եմ Օդեսայում ռուսերէն
լեզուով հրատարակուող «Телеграфъ» լրագրում մի
փոքրիկ հետաքրքիր յօդուած հետևեալ խորագրով:
«Օդեսայի շրջանի պ. հոգաբարձուի կարգադրութեամբ
քննութեան են ենթարկուել, թէ Օդեսայի միջնա-
կարգ զպրոցներում ի՞նչ ձևով են աւանդում Ֆրանս-
սերէն լեզուն»:

Յօդուածում ցոյց էր տուած, որ բազմաթիւ
զպրոցներից միայն երկուսում Ֆրանսերէն լեզուն ա-
ւանդելիս են եղել բնական կամ ամերիկական մեթո-
դով, իսկ մնացած բոլոր զպրոցներում թարգմանօրէն
են անցել: Քննիչի եզրակացութիւնը դարձեալ մի շատ
պերճախօս ապացոյց է բնական ձևով օտար լեզու սո-
վորողների համար՝ իսկ ամենախայտառակ մերկացումն
է թարգմանօրէն պահանջողների նկատմամբ:

«Այն աշակերտները՝ որոնք վից ամուսւայ ըն-
թացքում թարգմանօրէն են սովորել աւելի քիչ ու-
անհիմն զիտէին, քան նոքա՝ որոնք սովորել էին գործ-
նական ճանապարհով երեք ամսում և զիտէին թոթովել»:

*) Համարը կորցել եմ:

Յօգուածում համառօտ կերպով ցոյց էր տուած նոր եղանակով «նմուշ», առանց մայրենի լեզուի օգնութեան, առանց թարգմանութեան՝ ինչպէս են օտար լեզու սովորեցնում:

Այդ այդ յօգուածը փոխանակ մեր մանկավարժից ստանալու—ստանում ենք օտարից, որը վերջապէս ինձ մտատանջութիւններից մասամբ ազատեց, ինչպէս ասում է ժողովուրդը «աչքերս բացեց»: Ազատուեցան և խեղճ մանուկները, թէև երեք տարի ժամանակով. ներկայումս դպրոցը նոյն դրութեան՝ հին սիստեմի մէջն է գտնուում:

Ինչպէս որ մի արհեստաւոր իր արուեստի մէջ ստեղծողի դեր պիտի կատարէ, այնպէս և դասատու վարժապետը. բաւական չէ ունենալ ծամած պատրաստի հաց, ուղեցոյց, ծրագիր. նա ինքը պէտք է իր համար ճանապարհ հարթէ. ուսումնասիրելով տեղը, հանգամանքները, շրջապատող տարրը, սաների հոգեկան աշխարհը, նոցա մասնաւոր կենցաղավարական նիստ ու կացը, ծնողների դրութիւնը և այլ ու այնպէս գործը՝ պատասխանատու սուրբ արուեստը, իր ձեռքով առաջ տանի ու զարգացնի:

Երբ որևիցէ փչացած ժամացոյց կամ փականք կամ մի այլ դործիք իր տեսակի վարպետին էք տալիս շինելու, նա եթէ չըզիտենայ էր այնու ամենայնիւ պատուէրը կրնորունէ: Առարկայի հետ ժամերով չարչարուելուց յետոյ կը շինէ և քանի որ իր նպատակին չէ հասել, նա չի հանգստանում. այդպէս և ուսուցիչը իր առարկայի վերաբերմամբ պէտք է վարուի. նա շարունակ պէտք է մշակէ ու մշակէ, առանց ուրիշի օգ-

նութեան. մանաւանդ եթէ նոր է սկսում ոտ դնել ուսուցչական ծանր ասպարէզում:

Յօգուածի համեմատ ես բոլորովին թողի թարգմանօրէն սովորեցնելու ամեն մի ձև, որը ատելով՝ ատում էի. ես չէի կարող չատեր քանի որ Ֆրանսերէն և ռուսերէն սովորելիս՝ բառեր անգիր անելով հայուում ու մաշուում էի: Սկսեցի մի նոր գործ, որի յաջողութիւնը ինձ համար թանձր վարագոյրի տակ էր ծածկուած. բայց չըզիտեմ ինչո՞ւ հաւատացած էի, որ աշակերտներին աւելի լաւ կը լինի: Որչափ դժուար է, որ արդիւնքի մասին զաղափար չունես. գործը—արուեստը քեզ համար բոլորովին օտար անձանօթ՝ բայց բնագրամամբ հաւատալով սկսում ես մի հասարակական պատասխանատու գործ, որը յիշուաւի առանց աղմուկների չանցաւ, ինչպէս կը տեսնենք:

ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ՉՄՇԱԿՈՒՍԾ ԴԱՍԸ

Լաւ եմ յիշում առաջին դասին դասարան տալու մոմակալ, կնքամոմ թուղթ, ծրար: Այդ չորս առարկան եղաւ մեր պարապելու մի ժամուայ (55 րոպ.) նիւթը: Պէտք է ասել որ այդ խօսքերի հետ գործ էի ածում գործողութիւն ցոյց տուող խօսքեր (բայեր), այնպէս որ բոլորը մի տեղ հաշուած վստահ կասեմ որ 55 րոպէում սովորել կամ ընտելացել—ծանօթացել էինք մօտ 20 խօսքերի հետ:

Դասի վերջին վերջնականապէս ուղեցայ ստուգել և համոզուիլ թէ յիրաւի մի բան արել էինք:

Թէ՛ ժամաւաճառ եղել: Փոփոխակի հարցերից երևաց, որ մտքերն էին պահել, բայց շատ թոյլ: Իսկ երկրորդ դասին երբ կրկնեցինք, արդէն հաստատուեց, որ իսկապէս առարկաների անունները իւրացրել են: Առաջին և երկրորդ դասերի առարկաները վերցրի և դրի պահարան:

Իբրև աւագ ուսուցիչ առաւօտեան վաղ գալիս եմ դպրոց կարգադրութիւններ անելու, մաքրութեան վերայ հսկելու, ցուցակները պատրաստելու. և ի՛նչ, սեղանի վերայ տեսնում եմ սոխ, լոբի, բրինձ, հաց, աղ, պանիր և այլն. այդ ամենը աշակերտներից մէկն էր բերել. ո՛չ դքի պատուէր չէր տուած:

Մեր դասի նիւթը արդէն ծրագրուեցաւ ինքնիրան: Միացնելով նախընթացների հետ նոյն եռանդով սկսեցի խօսքերը սովորեցնել. այսինքն ամեն առարկայ մօտ տասն անգամ կրկնել, միայն զանազան ձևերով. իսկ երբ առաջի դասի պահած առարկաները հանեցի պահարանից և դեռ հեռուից հաղիւ էի ցոյց տուել որ միասին լուրջ, առանց հանաքի մէկ-մէկ, բարձր, հարազատ առողջանութեամբ սկսեցին անուանել ուրախ ու զուարթ դէմքերով:

ԱՇՍԿԵՐՏՆԵՐԸ ՕԳՆՈՒՄ ԵՆ ՈՒՍՈՒՑՉՈՒՆ

Անյայտ աշակերտից վարակուեցան ընկերներից շատերը. և կամ տեսնելով որ մէկի բերածը ուսուցչի կողմից ո՛չ միայն անուշադիր չմնաց, այլ մինչև անգամ դասի նիւթ եղաւ, այնուհետև ամեն օր նոր-

նոր անծանօթ առարկաներ բերելով սեղանը և պատահանի զոզերը լցրին: Մենք դժուած ճանապարհից առանց շեղուելու շարունակում ենք մեր գործը:

Բարեբաղդաբար թուաբանութեան և վայելչագրութեան դասերն էլ ինձ էին յանձնուած. այնպէս որ, սովորածներից թուաբանական խնդիրներ կազմելով և մի քանի բոպէ վայելչագրութեան նուիրելով՝ նիւթը աւելի հետաքրքիր էր դառնում. կերակուրը փոփոխուում էր. այդ մեծ նշանակութիւն ունի ընդհանրապէս երեխաների համար և՛ մանաւանդ այդ տեսակ դպրոցներում: Երկրորդ, մեծ էլ հմտութիւն է հարկաւոր, որ այդ ամենը իրար հետ աննկատելի կերպով կարողանաք միացնել:

Մի օր աշակերտներից մինը նարինջ էր բերել դրպոց: Հօր պատմելով բոլորը իրանց բաժինը կերել էին, իսկ Յովհաննէսը ոչ: Դեռ դասերը չէին սկսուած. բայց մենք վաղուց դպրոցի պարտեզում մեր պարապմունքն էինք սկսել. խաղի ձևով պարապում էինք գրեթէ բոլորի մասնակցութեամբ: Ես առնում եմ նորա ձեռքից նարինջը, կեղևը (կպեճ) մաքրում, մի քանի անգամ կրկնում, հօտ անում: Ստիպում եմ որ իրանք էլ հօտ անեն. մի քիչ ես եմ կծում և բոլորին էլ կտորկտոր բաժանում միշտ կրկնելով՝ նարինջ կեր, նարինջ, քաղցր նարինջ, Յովհաննէսը բերեց նարինջ, Անահիտը ուտում է մաքրած նարինջ. ո՞վ գիտէ տասը, թէ քսան անգամ անծանօթ առարկայի անունը լսեցին, տեսան, հոտոտեցին, ճաշակեցին. վերջի կտորը վերցրի և պահեցի: Անցաւ մի երկու շաբաթ. մի օր հանեցի ցոյց տալու համար. դասարանը թնդաց—

նարինջ: Այո, միայն այդ տեսակ կարելի է սովորեցնել: Յիրաւի դործը շատ և շատ դանդաղ է առաջ գնում՝ դուրսէ անփորձ ուսուցիչներէ համար և ձանձրալի: Բայց ոչինչ՝ կանցնի մի քանի շաբաթ և դուք կը տեսնէք, որ զգալի փոփոխութիւն է նկատուում սաների մէջ:

Դասարանում պարապելիս աշակերտներէց մէկը ձեռքը դրպանից մի տասը բոպէ չըկարողացաւ հեռացնել չընայելով, որ մի քանի անգամ ակնարկներով նկատեցի, թէ ի՞նչպէս պէտք է նստել, բայց չօգնեց: Վերջապէս մեղմ ու հանդարտ քայլերով մօտենում եմ իսկական պատճառը իմանալու. և ի՞նչ, դեռ իրան չըհասած երեխան հանում է զրպանից մի մեծ ձիու պայտ: Մենք պատմում ենք իրողութիւն և ոչ հեքիաթ: Այո, նաբերել էր անունը սովորելու: Խեղճ փոյայ, ո՞վ զիտէ, թէ քեզ ուրիշը՝ քո այդ անմեղ հետաքրքրութեանդ համար ի՞նչպէս կը բարկանար, կը գոռար, կը գոչէր, ի՞նչպիսի սոսկալի պատիժ կը նշանակէր. բայց ես ուրախ ժպիտով ու մի քանի անգամ էլ մէկին ու միւսին ցոյց տալով կրկնում էի պայտ, ձիու պայտ, մեծ պայտ, երկաթէ պայտ, մինչև տեղս հասնելը: Գուցէ տասն անգամ կրկնեցի և ապա լրջութեամբ դրի սովորելի առարկաների շարքը: Բնական ձևով օտար լեզու սովորեցնելու գաղտնիքը կրկնութեան մէջ է՝ այն, որը ընտանիքում տեսանք:

Լաւ է այդ էլ ապացուցանել զիտնական մարդու բերանով: Ահա Զօն-Ստուարտ Բլէկլի՝ Էդինբուրգի հա-

մալսարանի յունարէն լեզուի և գրական պրօֆեսորը *) ինչ է պատուիրում: ... «Մանուաւնդ շատ մեծ նշանակութիւն ունի կրկնութիւնը: Եթէ մեխը չի մշտնում տախտակի մէջ մօրճի մէկ խփելուց, խփեցէք կրկին ու կրկին: Այսպիսի զիպուածում յամառ ընդդիմութիւնը յաղթուում է: Այսպէս օրինակ, եթէ միտքը դժուարանում է միտը պահել, օրինակ բառս Դէվա սանսկրիտերէն նշանակում է Աստուած, բաւական է, որ նա այս օտար բառը մէկ շաբաթ շարունակ կրկնէ, և աներեբայ է, որ նա այլ ևս չի մոռանալ այդ բանը: Որքան աւելի տկար է ի բնէ մարդու յիշողութիւնը, այնքան աւելի վճռաբար կատարելութեան պէտք է հասցնէ սերտելու ու կրկնելու միջոցով: Մեր ընդունակութիւններն էլ երբեմն ծոյլ ձիու պէս հարկաւոր է մտրակել, այլապէս նոքա առաջ չեն գնում: Լեզուների ուսումնասիրելու մասին խօսելիս ասում է. «Լեզու ուսումնասիրելը **» լաւ ուսուցչի ձեռնտուութեամբ սկսեցէք: Նախ և առաջ ձեր ուսումնասիրած լեզուով բարձրաձայն անուանեցէք ամենայն իր, որ ձեր աչքի առաջն է և առանց մայրենի լեզուի միջնորդութեան. ուրիշ խօսքով՝ հէնց առաջի դասից սկսած ձեզ շրջապատող առարկաների մասին ձեր ուսումնասիրած լեզուով մտածեցէք ու խօսեցէք և յիշեցէք, որ խօսքերը նախ և առաջ ականջի և

*) Եր մտաւոր, ֆիզիքական և բարոյական ինքնակրթութեան գրքում, Տես երես 50. Յարգի. Գ. Շահբուզաղեանի:

**) Նոյն գրքի երես 48:

լեզուի մէջ պէտք է տպագրուին և ոչ թէ միայն ձեր գրքի և ուղեղի մէջ»:

Այն պահանջները, որոնք մենք ցոյց ենք տալիս և մի քիչ էլ աւելի, մենք տալիս ենք գործնական դասեր. իսկ ի՞նչ կը պատասխանէին պ. պ. Ս. Մանդինեան, Корханиди, Б. Фонь և, նոյն տեսակ մարդիկ գիտնական լեզուաբանին և ոչ թէ մեզ նման հասարակ ուսուցիչներին: Պարզ է թէ ինչ՞ը համար շարունակ ես շեշտել եմ ամեն գործնական դասում, թէ պէտք է կրկնել—բարձր առողանութեամբ և այլն:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԾ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Այսպէս մի ամսից յետոյ մեր փոքրիկ դասաւանական սեղանները ու պատուհանի զոգերը մեզ բաւական չեղան. դորա համար ստիպուած դպրոցի ընդարձակ դահլիճը մեզ համար դարձաւ յիրաւի ցընցոտիների, հազուստեղէնների, ոտնամանների, զըլխարկների, գործիքների, մթերքների, խաղալիքների, որոնք շատ անգամ իրանք էին շինում նմանցներով, չոր կամ թաց պտուղների ու մրգեղէնների, խմիչքների պահեստ՝ խանութ, որին մենք թանգարան անունով մկրտեցինք: Այդ ամենը մենք կանոնաւոր ու մեծ խնամքով կարգ՝ կարգ սովորելուց յետոյ տեսակների համեմատ շարում էինք նշանակուած տեղերում, յարմարացրած երկար սեղանների վերայ և կամ պատերից կախ էինք տալիս: Ահա հետաքրքիր ուսուցիչների համար դասակարգային նմուշներ:

Օրինակ, ունինք մի տեղ շարուած պղպեղ. կայ սև, կարմիր, կանաչ, թթու, ծեծած, չրծեծած: Մի ուրիշ կարգում—փայտ, աթար, ածուխ, քարածուխ, տաշեղ, լուցկի ևլն: Երրորդ նմուշ. քար իր տեսակներով յետոյ աղիւս, կղմինգր, կիր, կաւիճ ևլն: Հարկաւ դասաւանդման ժամանակ կամ ընդհանրապէս մեզ հարկաւոր կը զան այնպիսի առարկաների հետ գործ ունենալ որոնք որեւիցէ պատճառով անհնարին է դասարան բերել. մենք այդպիսի դէպքերում կօդտուէինք պատկերներից, որոնց տուած օգուտները անփոխարինելի են այս գործում: Յատուկ այդ նպատակի համար Օդեսայում կան հրատարակուած կենդանիների, թըռչունների միջատների, զեռուէնների, ձկների՝ բնութեան զանազան տեսարանների մեծադիր, գունաւոր, գեղեցիկ և արժան պատկերներ: Որչափ որ դպրոցի միջոցները կը ներէին, այն էլ կուուով բերել էի տուել, որոնք միշտ ձեռքից ձեռք էր անցնում. իսկ այսօր փոշին է ուրախանում *): Թէ ի՞նչպէս պէտք է օգտուել պատկերներից մենք շուտով ցոյց կը տանք գործնական դասով:

ՈՐՆ Է ԻՍԿԱԿԱՆ-ԲՆԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԸ

Այս ձևով պարապելու համար ես փորձից այս եմ եզրակացրել և իմ խորին համոզմունքն է, որ դասարան ինչ մտքով ունինք կամ հասկանում ենք

*) Ինչպէս անցեալ տարի անբաղդուծիւն ունեցայ տեսնելու. ոչ մի բան չէ մնացել. ոչ համարիչ, ոչ շարժական տառեր, ոչ Թուրքանական աղիւսակներ եւ ոչ Թանգարան:

բոլորովին պէտք չէ. միայն ձմեռուայ ամիսների համար գրել-կարգալ սովորեցնելու, թուաբանութեան, վայելչագրութեան և երգեցողութեան համար. պահանջը I և II նախակրթարանների նկատմամբ է:

Մենք մի դասարանի փոխարէն բնութեան ծոցում մի քանի հրապուրիչ, գեղեցիկ, կահաւորուած, ճոխ նիւթերով համեմած և որ զլիւաւորն է չըձանձրացնող դասարաններ ունինք. այսպէս օրինակ. բերդը*) որ շատ նման է Անիի կրկնակի պարիսպներին, աշտարակներին, խրամներին, մզկիթին. ունի արձանագրութիւն, մաղարաներ և շն. դա մեր խաղալու տեղն էր, որի պարիսպների քանդուած բարձրութիւնների վերայից երևում է ամբողջ քաղաքը իր շրջակայ հրաշալի տեսարաններով, որտեղից մենք ուսումնասիրում էինք շատ բաներ:

Լիմանի**) ափը իր հարուստ և բազմակողմանի տեսարաններով մեր երկրորդ զբօսավայրն էր. միշտ շոգենաւ է գալիս, դնում. մի կողմում քարհանքն է, նաւա-

*) ա) «Աղբերման նշանակում է Սպիտակ բերդ, ումանք Բէլ-գորոզ են ասում, իսկ Մոլդովացիները Չէտատի-Ալքան, որ նոյնն է Տես Պատ. Պոնդոսի, Հ. Մինաս վ. Բժշկեան. երես 145.

բ) «Աղբերման է երեւելի եւ զօրաւոր բերդ, որ աւաւ Սուլթան Պայէզիտ ի Թաթարաց 1484-ին. ուր ամեն ազգ կը բնակին. հայերը ունին եկեղեցի»: Ըստ Հ. Բժշկեանի, Տես եւ Նոր-դարի 1888 թ. հ. 59 մեր ընդարձակ յօդուածում:

*) ա) Գնեստր գետը Թափուում է կամ միանում Սեւ ծովի հետ իր լայն տարածութեամբ, միացած ընդարձակ տեղը ներկայացնում է մի լիճ. ահա այդ մասին բոլոր ազգեր՝ հայերը, հրէաները, յոյները եւ ուրաները ասում են Լիման, որի վերայ կատարուում է ազատ նաւադնացութիւն:

նաւամատոյցներ, ձկնորսներ, ուռկաններ, լաստեր, փոքրիկ շոգենաւեր, նաւակներ, մակոյկներ և այլն և այլն. ապա այգիները, ս. Գէորգի ուխտատեղին, գերեզմանատները՝ հայոց, յունաց, կաթողիկաց և այլն: Ահա մեր դասարանները—ահա և մեր բնութիւնից ծրագրուած ծրագիրը. միայն հարկաւոր է աշխոյժ, բարի ցանկութիւն, գործը սիրող մարդ. այդ տեսարաններից ամեն քաղաքում կամ զիւղում կան զուցէ և աւելի հարուստ:

Այո՛, դժուար է և շատ անտանելի այդ ձեռով պարապելը և ես խորհուրդ կը տամ՝ ոչ մի բան չբսկսել եթէ զուլի բերելու չէք: Այդ գործում միայն համբերատար, նպատակ դրած ուսուցչին էր յայտնի, թէ ի՞նչ էր ծրագրել, ի՞նչ էր ուզում վերջացնել և ի՞նչ բանի էր փափագում հասնել: Ո՞րչափ առողջութիւն, ի՞նչ մեծ զոհողութիւն և էնէրգիա էր կորցնում. իսկ այդ ամենի փոխարէն աղմուկ, իրարանցում և ամիսը մի ծառայի վարձ 30 բ.:

Այդ ամենից յետոյ, քաղցր է յիշել անցեալ օրերը և ամենից մխիթարականը ու բարոյական անմոռանալի կէտը, որ տարիներ անցնելուց յետոյ հիմայ էլ պատահում ես ոչ թէ աշակերտներիդ, փոքրիկ սովորողներիդ՝ այլ հասունացած մարդկանց, որոնք գնահատելով անցեալը և մանկական թարմ յիշողութիւնները մէջ խորը տպաւորուածների արգիւնքը—հայերէն ազատ խօսելները՝ կը պատմեն ոգևորուած, իսկ մեզ կրկին առիթ են տալիս մեր հին ցաւերը նորոգելու, որ 14 տարի ծառայելով հոգևոր ճխական եկեղեցական դպրոցներում, թէ բարոյապէս և թէ նիւթապէս յունայն ու անապահով դուրս եկանք:

ԳԵՏԻ ԱՓԸ ՈՐՊԷՍ ԴԱՍԱՐԱՆ

Խմբովին զնացել ենք զետի ափ. բաւական էր, որ մի աշակերտ հետաքրքրուել է որևիցէ շնչաւոր կամ անշունչ առարկայով (շատ սիրում են կենդանիներով զբաղուել). օրինակ նա տեսել է կրիայ. մենք բոլորս իսկոյն կը հաւաքուէինք, շուրջ բոլորած կըսկսէինք մի առ մի պատմել, հարցներ, ցոյց տալ նորից կրկնել. դարձեալ իրանց ստիպում էի, որ պատմեն. կամաց կամաց կենդանուն մորթել, փորոտիքը, աղիքները, թոքերը, ստամոքսի պարկը, սիրտը և այլն քննել: Դորա համար էլ մենք շեշտում ենք ու անպայման պահանջ զնում, որ ուսուցիչը պէտք է բազմակողմանի ուսումնասիրած լինի բուսաբանութիւն, հանքաբանութիւն, կենդանաբանութիւն. որոնցից ես շատ պաշար չունէի: Իսկ այդ առարկաների հիմնական ու հաստատուն զիտենալը խոշոր ու մեծ նշանակութիւն ունեցող պայմաններից զլիւսաւորն է այս տեսակ պարապմանց ժամանակ: Ուսուցիչը պատմում է. կարծես, թէ բոլոր ունկնդիրներն էլ հասկանում են, այնինչ 100 խօսքից զուցէ 20-ը հասկանան. ոչինչ, տասն օր չանցած դարձեալ կը պտտահի մի ուրիշ կըրիայ. էլի կրկնել, էլի պատմել և բաւական է:

Յարգելի ուսուցիչներ, բազմաչար դասատուներ մի յուսահատիք. եղէք համբերող. ինկատի ունեցէք, որ բացատրեցինք նախկին երեսներում՝ թէ տանը ի՞նչպէս են սովորում. այստեղ ևս պէտք է նոյն տեսակ պարապելուց զատ, միշտ յիշէք և չըմոռանաք, որ մենք մի քանի

տարուայ գործ մի քանի օրում չենք կարող անել՝ անբնական է: Մի՛ մոռանաք, որ ժամանակի մեծ տարբերութիւն կայ. մանուկը ձեր մօտ կը մնայ օրինակ, 4—8 ժամ. իսկ տանը երկու անգամ աւել: Ունեցէք տոկունութիւն. ես այդ փորձով եմ ձեզ հաւատացնում:

ՄԻ ՈՒՐԻՇ ԱՆՓՈՍԱՐԻՆԵԼԻ ԴԱՍԱՐԱՆ
ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

Մտել ենք մեր կենդանի դասարանը: Սովորելու նիւթ որչափ կամենում էք, մենք կանգնած ենք երկաթէ վանդակի մօտ. բայց ենք անում զուռը. զերեզմաններ՝ մի, երկու, երեք և այլն. շիրիմ, տապանակ, տապանազիր, քար, մարմառ, արձան, արձանազրութիւն. պսակներ՝ կանաչէ, երկաթէ, թիթեղեայ. հանգուցեալի պատկերը, ծառեր, ծաղկամաններ, արտասուող ուռենի, մայր ծառ, մամուռ... անուանում ենք, կրկնում, թողնում ու հեռանում:

Այդպիսի շիրիմներ շատ կան, միայն պէտք է մի քանի անգամ կրկնել. կրկնել տալ հարցերով, խմբովին, մէկ-մէկ, մի քանիսը միայն: Իսկ եթէ երկրորդ և երրորդ անգամ յաճախէք զերեզմանատուն և նոյն տեսակ պարապելը, անկասկած կը տեսնիք և կը լսէք, որ աշակերտները ինքն իրանց կըսկսեն հարցնել և այդ մի տեսակ խաղի ձև է ստանում, որ շատ ցանկալի է. և նոյն իսկ հմուտ ուսուցիչը այնպէս պէտք է գործը առաջ տանի՝ որ տղաների մէջ ցանկութիւն, զիտակցու-

Թիւն զարթնացնի և այդ շատ հեշտ է. մի անգամ ցոյց տալուց յետոյ կարող է ձեւացնել, որ ինքը յողնել է. Թող ինքն իրանց հարցնեն. ինքնափստահուած թիւն պէտք է առաջ բերել. իսկ երբ նկատու՞մ էի, որ մէկն ու մէկը տրամադիր է սխալ անելու, դեռ սխալը դուրս չեկած՝ իսկոյն յուշարարի պէս վերայ էի ընկնում և ուղիղը ասում. աւելի լաւ է չըթողնել մի սխալ անելու, քան թէ տասը ուղիղ խօսք սովորեցնել: Աւելի հեշտ է տասը ուղիղ բան սովորեցնել, քան մի սխալ երեխայի մտքից հանել: Ուսուցիչը միշտ պիտի երեւակայէ, թէ ինքը իր նմանների հետ զործ ունի. բայց միշտ էլ իրան մոռացութեան չըպիտի տայ, թէ ինքը մանկական աշխարհի հետ զործ ունի: Հեշտից—դժուար, պարզից բարդը, մեր գիտնական մանկավարժները միշտ հնչեցնում են զզուշացնող խօսքերով մեր ականջին. բայց գործնական կերպով՝ պարզ խօսքերով չեն ուզում ցոյց տալ. եթէ տղան չըզիտէ Հայր, մեր, ու երկնումն ես և այլն, հետեւապէս այդ խօսքերով չըպէտք է նորան թուրթակ զարձնել. ուստի պահանջում են հասկացնել, ցոյց տալ այդ ամեն խօսքերը, իրանց նշանակութիւնները և այլն. դորա համար էլ ասում են, հեշտից—դժուար, գործնականից — տեսականը, զննականից—վերացականը: Մենք խորհուրդ կը տանք, վերացական խօսքերը անուշադիր թողնել. այսպէս խիղճ, ազգատութիւն, նախանձ, հրեշտակ, չար, բարի և այդ տեսակ զազափարներ արտայայտող խօսքեր: Այդ բանը մենք ընտանիքում էլ տեսանք: Վերջապէս մարդուս հարկաւոր են մի խումբ բառեր, որոնցով կարողանայ

իր պէտքերը հոգալ, ահա այդ խօսքերի վերայ պէտք է ուշադրութիւն դարձնել. աւելի կարեւոր է, որ ջուր խօսքը սովորի, քան թէ օղի. աւելի հարկաւոր է օղի գիտենայ, քան թէ զարեջուր. կարծում եմ, որ մեր ասածը պարզ է. գործածական խօսքեր՝ որոնք միշտ լսում ենք:

Զլլինի թէ ոգևորութիւնը ծայրայեղութեան հասցնէք, որը միշտ էլ փնաս է. «շտապողին չի յաջողի»: Ամեն մի տեղ որոշ ծրագրով մտէք և ծրարադրից դուրս գալու իրաւունքը ի չարը չպէտք է գործադրէք. մի բան չըսովորեցրած միւսին մի անցնէք այլ ձեւը փոխէք: Այո՛, այսպիսի դասարանների բարերար ազդեցութիւնը անգնահատելի՝ անմոռանալի են միայն նորա համար, որ առարկայի՝ պատկերի հետ երեխան լսում է անունը և տեսնելով նա որոշ զազափար է կազմում կամ թէ զիտցածը աւելի արմատացնում: Միթէ պարզ չէ՞, որ հէնց դպրոցներում աշակերտները աւելի շուտ են ըմբռնում այն՝ որը ուսուցիչը ցոյց է տալիս նոցա: Աւելի շուտ է սովորում աշակերտը երբ ցոյց էք տալիս $2+2=4$ քան թէ մի ուրիշ բան: Պատմութիւնը աշակերտի միտքը կը փնայ աւելի շուտ, երբ դուք ցոյց տաք գործողութեան տեղը և սահմանը: Փաստ է, որ այն առարկաներն են առաջ դնում՝ որոնք աւելի տեսական՝ զննական են: Խօսէք ժամերով օրինակ, քարերի, բոյսերի, կենդանիների մասին նոյն իսկ ցոյց տալով և ձեզ կը լըսեն: Խօսէք մոլորակների վերայ ... վերջինումս միայն աշակերտի երեւակայութիւնն է առաջնորդում կամ գործում, իսկ առաջինում աչքը երեւակայութիւնը և բոլոր հոգեկան կարողութիւնները միասին են գոր-

ճուռ: Առարկան դիր աչքիդ առաջ և այնպէս քննէք, ուսումնասիրէք, այդ ասել է հեշտից—դժուար, պարզից—բարձր, նիւթականից—վերացականը անցնել:

Ռուս յայտնի մասնագէտ մանկավարժի դիտողութիւնը. «Մեզանից ամեն մինը փորձած կը լինի՝ որ առարկայի ընդարձակ նկարագրութիւնը, որի մասին մենք կամ կարգացել ենք զրքում կամ մեզ նոյն առարկայի մասին հազորդել են, մեզ վերայ այն ազդող տպաւորութիւնը չի թողնում կամ առարկայի պարզ պատկերը չի ներկայացնում, քան մենք ինքներս տեսած լինէինք նոյն նկարագրած առարկան. ահա ինչո՞ւ իւրաքանչիւր նկարագրութիւն պէտք է լինի՝ որչափ հնարին է, տեսական-գննական»: «Սովորեցրէք աշակերտին որեւիցէ հինգ խօսք» ասում է Ուշինսկին*) «և նա երկար ու անօգուտ տեղը նորանցով պիտի տանջուի. բայց միացրէք պատկերի հետ այդպիսի քսան խօսքեր և երեսան նոցա կը պահէ իր ծոցում: Դուք բացատրեցէք երեսային մի հասարակ բան—միտք և նա չի հասկանալ ձեզ, դուք բացատրեցէք հէնց նոյն երեսային բարդ պատկերներ և նա ձեզ կը հասկանայ շատ շուտ»:

Այդ մի քանի նախադասութիւնները՝ իր ժամանակի առաջին մանկավարժի և դեռ այժմս էլ ասպարիզից չիջած հեղինակաւ որ բերանից դուրս եկածները մեզ շատ բաներ են սովորեցնում: Հասկանալի է՝ թէ սանը տեսնելով գերեզմանատունը և տեղնուտեղը մի տասը անգամ ուսումնասիրելուց յետոյ շատ շուտ կ'իւրացնէ, կը մարսէ և կը պատմէ:

*) К. Уш. Руков. къ преподав. по Род. Слову.

Ա.

Գ Ո Ր Ծ Ն Ա Կ Ա Ն Գ Ա Ս

1. Ծրագիր. Օրինակ սեղանի վերայ կայ մոմակալ կնքամոմ, զիրք, քանոն, քարետախտակ, թանաքաման, զրչակոթ, կաւիճ, սպունգ, ջնջան:

2. Նպատակ. Իւրացնել տալ վերևում յիշուած խօսքերը կամ առարկաների անունները բնական ճանապարհով:

3. Աւանդման եղանակը. Ուսուցիչը բարձրացնում է առաջին առարկան օր. «մոմակալ». բռնում է այնպէս, որ բոլոր սաները ազատ տեսնեն. սորան կամ նորան նայելով անուանում է մոմակալ, մոմակալ, մոմակալ և նորից իր տեղն է դնում. յետոյ նոյն ձևով կնքամոմ ... ապա զիրք ... քանոն ... ջնջան ...: Ինչպէս ասացինք բոլորը անուանելուց յետոյ ամեն մի առարկայ պէտք է իր տեղը դնել կանոնաւոր, կարգ-կարգ առանց խառնելու: Նախ կարող է պատահել, որ աշակերտը տեղի հետ մտքում կը կապէ առարկայի անունը, երկրորդ կը սովորեն դործին լրջութեամբ վերաբերուիլ և վերջապէս կենդանի օրինակով կարգապահութիւն էք ներշնչում:

Նորից վերցնում էք առաջին առարկան մոմակալ ցոյց տալով՝ նոյն տեսակ և միմիկայով (ահա թէ ինչոյց տալով՝ նոյն տեսակ և միմիկայով (ահա թէ ինչ

չո՞ւ են ասում «համրի» մեթոդ», ձեռքով կամ հէնց քո վերայ ցոյց տալով, որ բերանները բանան և քո հետ կրկնեն: Ասենք խմբովին կրկնեցին մոմակալ, մոմակալ և նորից տեղը դրիր: Այդպէս վարուել բոլոր առարկաների հետ: Երբորդ անգամ պէտք է կրկնել տալ դարձեալ նոյն ձևով. միայն թէ ինքդ յուշարարի դեր ես կատարելու: Ապա հրաւիրում էք մի աշխոյժ աշակերտի. ուսուցիչը նոյն կարգով ցոյց է տալու բարձրացնելով, որ աշակերտը անուանէ, այդպէս պէտք է վարուիլ բոլորի հետ և յետոյ մի քանիսին դուրս հրաւիրել. նոցանից մինը պէտք է բարձրացնէ, իսկ միւսները կամ բոլոր դասարանը պէտք է խմբովին անուանէ մոմակալ և այլն: Եթէ կասկածում էք, պէտք է աշակերտի ձեռքը բռնած ցոյց տալ առարկայի անունը՝ անուանելիս. մանաւանդ թոյլ սաներին միայնակ չըպիտի թողնել: Եթէ լիակատար համոզուած էք, որ քո անուանած առարկան կարող է ցոյց տալ և կամ քո ցոյց տուածը ինքը կանուանէ, դորանից յետոյ շատ նպատակայարմար է, որ մէկը միւսին ցոյց տայ և միւսն էլ անուանէ:

Այդ ամենից յետոյ պէտք է խառը ցոյց տալ և հարցնել նոյն ձևով, խմբովին, մէկ-մէկ, երկու երկու. այսքան անգամ կրկնելուց և վարժութիւններ անելուց յետոյ, պէտք է հաւատար, որ մինչև անգամ թոյլ յիշողութեան տէր աշակերտը դարձեալ իւրացրած պիտի լինի կամ մօտ է իւրացնելու: Ո՛չինչ, պէտք է համբերել, քանի որ դեռ շատ անգամ ենք կրկնելու: Այդ ամենը աշակերտի աչքին մի տեսակ խաղի ձև է ստանում և այդ ցանկալի է: Երբ ուսու-

ցիչը համոզուած է և արդէն փորձած, որ աշակերտները զիտեն, իւրացրել են ցոյց տուած առարկաների անունները՝ պէտք է աշխատի համեմել, նիւթը փոխել:

Այսպէս՝ դառնալով մի աշակերտի. դուրս արի. եթէ չի հասկանում «համրութիւնով» հասկացուր. շատ անգամ երեխային ոտ հանելիս մայրը ի՞նչպէս է անում. կանգնեցնում է երեխային ու կանչում: արի, արի, արի. ձեռքերով էլ նոյնը ցոյց տալիս, երբեմն էլ որեւիցէ մրգեղէնով հրապուրում: Երեխան ստիպուած մօրն է զնոււմ: Ասենք եկաւ: Յովհաննէս տո՛ւր ինձ մոմակալ (ինձը, տուրը՝ ցոյց տալ): Տո՛ւր ինձ քանոն, տո՛ւր ինձ թանաքաման: Այդպէս հարցնել միւսին, երբորդին, վեցերորդին:

Աշխատեցրու ընդհանուր դասարանը, թող այդ նախադասութիւնները խմբովին կրկնեն և միշտ էլ պէտք է անել տալ. թող ինքնավստահութիւն ձեռք բերեն: Յովհաննէս, մոմը տո՛ւր Վարդգէսին: Գրիչը տո՛ւր Մարիամին: Թանաքամանը տար տո՛ւր կարապետին: Մկրտիչ, տո՛ւր կաւիճ և սպունգ: Վարդգէս, տո՛ւր քարետախտակ և քարեզրիչ: Այդպիսի վարժութիւններ փոփոխակի ձևերով որչափ շատ անել տաք, այնչափ օգտակար է և անհրաժեշտ:

Ինչպէս տեսնում ենք, աշակերտին ընտելացրինք, արի, դուրս արի, ինձ արի, Յովհաննէս, տուր, Վարդգէսին և այլն և այլն: Գուցէ կը կասկածիք, որ նոքա թութակի նման՝ չիւրացրած քեզ հետևելով են կըրկնում: ոչինչ՝ աւելի լաւ: Մի օր նա զիտակցաբար և հաստատ, համոզուած կերպով գործ կածէ. չպէտք է շտապել. միայն հաւատացած գործը շարունակէք և

մի քանի ամսից յետոյ միայն իրաւունք կունենաք
դատելու և ապա պարզ կը հասկանաք, թէ որչափ
մեծ գործ էք արել:

Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կան ձեռնարկներ, սրոնց հեղինակները թէև ու-
զում են թարգմանորէնը բնականի հետ միացնելով
գործը առաջ տանել, բայց չարաչար սխալուում են.
ինչպէս պ. Ս. Корханиди: Ահա թարգմանութեան մի
նմուշ*):

Лампа = լամպ(ա). լաւ է ասել նրազ, յունարէն
խօսք:

Лейка = ջրցիր. սխալ է. պէտք է լինի ձագառ =
воронка. իսկ ցնցուղ = ջրցիր կայ ուուսերէն поливальникъ.

Тазъ = տաշտ. պէտք է լինի քաւ, լախան, կոնք:
Корыто = տաշտ, ճիշտ է. բայց тазъ = չէ корыто-ին:

Миска = փայտէ աման, լաւ է ասել գուռ-չանախ:
Эполеты = էպօլէտներ. պէտք է լինի ուսադիրներ:

Офпцерь = օֆիցեր. պիտի լինի սպայ:
Землекопъ = հողագործ. պէտք է լինի հող փորող:

Чашка = թարախ. մեծ սխալ է. բաժակ, քաւ:
Այսչափով մենք կը բաւականանանք:

Պ. Ս. Корханиди-ի բնական ձևով սովորեցնելու
մի նմուշ. —


Что это? — Икона. — Что это? — Книга. — Что это? —
Столъ. — Что это? — Стуль.

Это — икона, это — книга ...

*) Քաղում ենք հեղինակի «Живое Слово»-ից. 1906 թ. Բա-
ները ստուգել ենք Գաղաշ. եւ Յովհ. բառարաններով.

Պարզ երևում է, որ այդպիսով միայն ժամավա-
ճառ ենք լինում. նպատակն է սովորեցնել Икона, Кни-
га, столъ, стуль ... Էլ ինչո՞ւ հարցնել՝ սա ի՞նչ է.
նա անունը դիտէ իր լեզուով, նորան պէտք է միայն
օտար անունն հետ ծանօթացնել, որը մենք ցոյց
տուինք: Երկրորդ это — Икона, թողած է օժանդակ
բայը (есть). վերջապէս կարելի է կասկածիլ, որ նա
ապագայում կը դժուարանայ это Икона և эта Икона
սեւի համաձայնութեան նրբութիւնը ջոկել, որ երե-
խայի համար շատ դժուար է:

Ինքն էլ զգալով իր սխալը, ուսուցիչներին զգու-
շացնում է խստապահանջ չը լինիլ: Հիմայ բարեխիղճ
ուսուցիչը կարող է պարզ հասկանալ, թէ որչափ տար-
բերութիւն կայ նոյն բնական ձևով սովորեցնելու մէջ.
մենք դիտմամբ այդ երկու կէտը առաջ բերինք — նախ
ցոյց տալու՝ թէ թարգմանորէն սովորեցնելիս ի՞նչ
սոսկալի մեղքի մէջ են ընկնում. և երկրորդ՝ դա բը-
նական ձև չէ՞ այլ մի խառը բան:



Բ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍ

1. Ծրագիր. կրկնել միասին անցածները. խառն սովորեցնել նոր խօսքեր, կազմել փոքր նախադասութիւններ 10—15 բոպէում:

2. Նպասակը իւրացնել *սալ՝ պահարան, զրատախտակ, մատիտ, զրչածայր, զրչահատ, դանակ, տետրակ, պատկեր, սեղան, աթոռ, նստարան, քարետախտակ, ժամացոյց, թուղթ, պայուսակ, դուռ, լուսամուտ, յատակ, առաստաղ, վառարան և այլն:*

3. Աւանդման եղանակը. Պէտք է ճիշտ, առանց շեղուելու առաջի դասի նման ինքը ուսուցիչը մէկ-մէկ բարձրացնէ կամ ձեռքով ցոյց տայ—անուանէ անունը, բարձր, հարազատ առողանութեամբ *). կարգով ցոյց տայ, միասին կրկնել, մի քանիսը միայն կրկնեն կամ երկու-երկու: Դուրս կանչել մէկին, երկրորդին, չորրորդին, որ ցոյց տան, անուանեն, իրար հարցնեն՝ բոլոր դասարանը խմբովին անուանէ. վեր-

*) Նկատուած է, որ Բեսարաբիայի եւ Խրիմի հայերը ճիշտ չեն արտասանում օրինակ հաց. այլ ասում են խաց եւ այլն. ուսուցիչը աշակերտի վերայ լուրջ ուշադրութիւն պիտի դարձնէ. դա թելադրութեան ժամանակ շատ կարեւոր է:

Չապէս իրանք պէտք է ուսուցչի դերը կատարեն. նորից նոյն խօսքերից կազմել նախադասութիւններ. —

Կարապետ, դուրս արի, վերցրու կաւիճը: Մկըրտիչ, արի վերցրու կաւիճը և զրէ: Եթէ ուսուցիչը ցոյց տայ ևս աւելի լաւ: Դու, Մարիամ, արի վերցրու սպունդը և ջնջիր: Յոյց տայ: Վերցրու մատիտ և զրիր թղթի վերայ: Ա՛ռ սպունդ, մատիտ, կաւիճ և տուր Վահանին:

Այո՛, շատ դժուար է զրի առնել այն նրբութիւնները, որոնք կարող են անակնկալ պատահել հէնց անհրաման ժամանակ. ուսուցիչը միշտ պիտի աշխատի աշակերտներին աշխատեցնել տալ:

Գ Ո Ր Ծ Ն Ա Կ Ա Ն Դ Ա Ս

1. Ծրագիր. Թուերի մասին:
2. Նպատակ. Սովորեցնել 1—10 համարել. ապա առաջին, երկրորդ, մինչև տասներորդ. եզակի, յոգնակի:
3. Աւանդման եղանակը. Նախընթաց դասերից աշակերտները սովորել են սեղան, աթոռ, լուսամուտ, նստարան, դուռ, վառարան, ապակի և այլն:

Ուսուցիչը պէտք է նորից մի անգամ կրկնէ սովորածները՝ ապա հարցնելով ցոյց տայ մի աթոռ, երկու աթոռ, երեք աթոռ: Մի դուռ, երկու դուռ, երեք դուռ ... բոլորի հետ այդպէս վարուել և կամաց կամաց բարձրանալ. միւս դասին մինչև հինգը և այլն: Յետոյ խմբովին համարել տալ իր մատները, ցոյց տալով մի մատ, երկու մատ, երեք: Նստարանները նոյն տեսակ համարել և այլն. մէկ-մէկ, խմբովին: Նպատակայարմար է առաջուց պատրաստել տալ ու պատից կախել հետևեալ աղիւսակը ստուերաթղթի վերայ պատրաստած.

1	2	3	4	5	6	7	8	9	10
0	00	00	00	00	000	0000	0000	0000	00000
	0	00	000	000	000	0000	00000	00000	00000

Հէնց այդ դասին էլ աղիւսակի վերայ վարժութիւններ անել: Մի քանի օրից յետոյ՝ եթէ տաք իբրև զբաւոր վարժութիւն՝ կը տեսնէք, որ կարող են

և զրել. իսկ եթէ փորձէք ինքներդ էլ հետները թելադրութիւն անել—այսպէս՝ զրեցէք մէկ. 1=0. երկու, 2=00 և այլն. մաս-մաս, յետոյ խառը: Շատ օգտակար է վերջը միայն թելադրէք՝ որ իրանք զրեն. սորանով օգնած կը լինիք թուաբանութեան ուսուցչին էլ, բայց աւելի խելացի վարուած կը լինին այդ դրութեան ղեկավարիչները, եթէ բոլոր առարկաները մի ուսուցչի յանձնեն, որպէս զի փոփոխակի օգտուի, սովորած խօսքերից խնդիրներ կազմել և վճռել դասարանում շատ օգտակար է:

Աւելորդ է յիշեցնել, որ սովորած խօսքերը իսկոյն գործածութեան պէտք է մատնել և մեր ընթերցողը թող չը կարծէ, թէ այս ամենը մի դասուց գործ է. ոչ, այլ մի քանի դասեր պիտի զոհել միշտ անցածը կրկնելով: Դա թողնուում է աւանդողի տրամադրութեան տակ: Բայց պարապելու ձևը միևնոյն կերպով շարունակել: Արշակ համարէ լուսամուտները, նստարանները, պատկերները և այլն: Յովհաննէս ցոյց տուր, թող Արշակը համարէ համարչի վերայ: Շատ անգամ ուսուցիչը ահամայ գործ է ածում նպատակից դուրս աշակերտներին անծանօթ խօսքեր. այդ գործին արգելք չէ, մինչև անգամ պէտք էլ է. միթէ մենք հասակաւորներս շատ անգամ նախադասութիւնների մտքերից չենք հասկանում մեզ անծանօթ խօսքերի մօտաւոր նշանակութիւնները: Այո՛, շատ և շատ են պատահում. այդպէս և նոր սովորողները կարող են մոթ զաղափար կազմել անծանօթ խօսքերի մասին, որ յետոյ նոքա գուցէ և կ'իւրացնեն:

Գ Ո Ր Ծ Ն Ա Կ Ա Ն Գ Ա Ս


1. Ծրագիր. Բայերի մասին:
2. Նպասակը. Իւրացնել տալ օրինակ շփել, բռնել, կարգալ, համարել, բարեւել, կանգնել, նստել և այլն:
3. Աւանդման եղանակը. Առաջի դասերից աւազակերտները արդէն մի քանի գործողութիւն ցոյց տուող խօսքեր սովորած են. այստեղ էլ աւանդման ձևը բոլորովին նախընթացների նման պէտք է աւանդել՝ ցոյց տալ, շփել, բռնել և այլն. որպէս զի կրկն-նութիւն արած չլինինք, կաւելացնենք մի քանի նախադասութիւններ:

Ձեռքերդ բարձրացրէք, աջ ձեռքդ թող. ձախ ձեռքով բռնիր ձախ ականջդ և այլն. այդպիսի հասարակ նախադասութիւններ. այդ դէպքում լաւ է դասարանական մարմնամարզութիւնից օգտուիլ: Մարմնամարզական վարժութիւնները դասարանում կրկնակի օգուտ են տալիս. աշակերտներին վերակազդուրում են. տիրում է կատարեալ կարգ. դասը անցնում է ուրախ և անզգալի կերպով ժամը վերջանում. նոյն իսկ ցաւում ես, որ դասը վերջացաւ: նոյն բանը մեծ դասամիջոցներում էլ կարելի է անել խաղի ձևով և արժէ մինչև անգամ առանձին ժամեր նշանակել: Բացի դրանից դպրոցական խաղերից պէտք է միշտ օգտուիլ, որի ժամանակ կարելի է շատ ու շատ բայեր սովորեցնել: Վերջապէս աւանդման եղանակից չը պէտք է շեղուել:

Գ Ո Ր Ծ Ն Ա Կ Ա Ն Գ Ա Ս

1. Ծրագիր. Գոյների մասին:
2. Նպասակը. Սովորեցնել սպիտակ, դեղին, կարմիր, սև, կանաչ, ժանգաօր, կապոյտ (հիմնական գոյներ):
3. Աւանդման եղանակը. Գորա հեշտ միջոցն է. վերցնել թուած գոյների մահուտներ, թելեր, մատիտներ: Նախապէս նոքա ծանօթ պիտի լինին մահուտի, թելի և մատիտի անունների հետ. հիմայ շատ հեշտ է ցոյց տալով ասել. սպիտակ մահուտ, դեղին մահուտ, կարմիր մահուտ և այլն. իրանց հարցնել ցոյց տալով. մէկ-մէկ, խմբովին, բոլորովին առաջին դասի աւանդման նման: Ապա նոյն տեսակ վարուել թելերի հետ. իսկ մատիտներով կարելի է և ստուերաթղթի վերայ գրել տալով էլ սովորեցնել. արժէ և գունաւոր իրերից, պատկերներից՝ բնութեան մէջ եղած գոյներից էլ օգտուել: Քանի որ նոքա մատիտի, մահուտի անունները գիտեն, նոցա համար շատ պարզ է, որ գոյներն են սովորում. ի նկատի պէտք է ունենալ, որ աշակերտներն էլ կամաց-կամաց կը վարժուեն աւանդման ձևին: Վատ չէր լինի, եթէ ստուերաթուղթ ունենալիք գոյներով նկարուած ու միշտ էլ պատից կախ


արած. օգուտն այն է, որ աշակերտները դոյները կարգով կը տպաւորեն. թէև նոցա համար նորութիւն չէ. և մինչև անգամ համարելու ձևով էլ կարելի է երբեմն վերան վարժութիւն անել, ցոյց տալով կարմիր, դեղին, պարապելու ձևը նոյնն է (տես Ա. դաս) միշտ էլ նախադասութիւններ կազմել: Տնւր ինչ կարմիր մատիտ: Վերջրու դեղին մատիտը և գրիւր: Մկրտիչ, տնւր Յովակիմին կանաչ մահուտը: Մարիամ, ցոյց տուր սև, դեղին և կարմիր թել: Կարմիր թելը տուր Անահիտին: Անահիտ, կարմիր թելը դիւր սեղանի վերայ: Անահիտ, տնւր Մարիամին կարմիր, սպիտակ ու դեղին թել, թող մի զոյգ գուլպայ գործէ: Յետոյ ստիպել որ իրանք էլ կազմեն սովորած բառերից նախադասութիւններ:



2.

Գ Ո Ր Ծ Ն Ա Կ Ա Ն Դ Ա Ս

1. Ծրագիր. Ե. դասի շարունակութիւնը ածականների մասին:
2. Նպասակը. Սովորեցնել՝ նեղ-լայն, կարճ-երկայն, բարակ-հաստ, մեծ-փոքր և այլն:
3. Աւանդման եղանակը. Սովորեցնելու ձևը նոյնն է. պէտք է ցոյց տալ միայն թէ ծանօթ առարկաներ ունենալ և համեմատական ձևով հասկացնել, ցոյց տալ քանոն, յետոյ կրկնել նեղ քանոն: Յոյց տալ միւսը՝ միւսների հետ էլ պէտք է նոյն տեսակ վարուել. ինչ էլ որ կամենում էք սովորեցնել նոյն տեսակ պէտք է գործը սկսէք ու վերջացնէք: Անպայման հարկաւոր է նախադասութիւններ կազմել, կրկնել, իրանց ստիպել, որ կազմեն միայն համեմատական ձևով: Այս դուռը նեղ է կամ ահա նեղ դուռ, իսկ միւսը լայն դուռ է: Եկեղեցին ունի երեք լայն լուսամուտ և հինգ նեղ ու փոքր լուսամուտ:



Է.

ԳՈՐԾՆԱԿՍՆ ԳԱՍ

ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդհանրապէս հմուտ, փորձառու դասատուները վաղուց ընդունել են, որ երեսաների յիշողութիւնը, միտքը զարգացնելու միջոցներից մէկն էլ երեխայի հասակի և զարգացման աստիճանի համեմատ ընտիր ոտանաւորներ անգիր անել տալն է. այս դէպքում էլ ուսուցչի գործը շատ դժուարանում է. նա սովորած բառերից ու նախադասութիւններից պէտք է մի տեսակ յաջողացնէ ոտանաւոր կազմել թէպէտե՛նչ նուրբ բանաստեղծական պահանջներով: Նորից սովորած խօսքերը ու նախադասութիւնները վերակրկնելուց յետոյ, կտոր-կտոր ոտանաւորը խմբովին անգիր անել պիտի տայ դասարանում. ապա որչափ հնարաւոր է, մի երգի եղանակով էլ երգել տալ: Այսպէս մեր սովորեցրածներից մի նմուշ.

Շուտով եկէք աշակերտներ,
Մենք դասարան հաւաքուենք:
Մենք էլ շուտով աղջիկներ՝
Վարժապետին սպասենք:

Ուսուցիչը ներս մտաւ.
Կանգնենք ոտի ու գլուխ տանք:
Վարժապետը այսպէս ասաւ,
Մենք ընկերին բարեւ տանք:

Դէհ, շուտ արեք աշակերտներ՝
Ժամանակը չըկորցնենք,
Մեզի ասին ուսուցիչներ,
Խելօք ու լաւ մարդ կը լինինք:

«Մարտը տալիս է ձնծաղիկ»-ի եղանակով էին երգում:

Յիրաւի դուցէ շատ անհամ է, դուցէ և կան շատ թերութիւններ, բայց պէտք է հիանալ թէ ի՞նչ ոգեւորութեամբ էին երգում: Երեւի միայն նորա համար, որ ամեն խօսք մարտած ու իւրացրած էին. հետեւապէս եթէ շնորհալի կազմած լինին և լաւ էլ եղանակած, պէտք է սպասել կատարեալ յաջողութիւն: Շատ անգամ՝ երբ գնում էինք այգիները՝ քաղաքից դուրս, երգելով էին գնում՝ ուրախ, զուարթ: Ո՛րչափ համբերութիւն, հնազանդութիւն, աշխոյժ, յիշողութիւն աշակերտների կողմից. այդպիսի անմեղ մանուկների հետ պարապել, ապահով ազատ, անկախ՝ գործը գիտցող ուսուցչի համար՝ աւելի երջանիկ բան չկայ: Զարմանալին այն է, որ իրանք էլ հասկանում են, որ մի գործ են կատարում, մի բան են սովորում և ուսուցչին օգնում: Վերաբերուում են ուսուցչի հետ իսկ և իսկ հարազատ որդու նման. պարզ, առանց քաշուելու, աներկիւղ, բայց յարգանքով ու սիրով:

Գ Ո Ր Ծ Ն Ս Կ Ա Ն Դ Ա Ս

Պ Ա Տ Կ Ե Ր Ե Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն

1. Ծրագիր. Գրատախտակից կախ է արած օր-
անտառ:

2. Նպատակ. Անտառի տեսարանից սովորեցնել
խօսքերի, կազմել նախադասութիւններ և յետոյ այդ
նախադասութիւններից դուրս բերել անտառի նկա-
րագրութիւնը:

3. Աւանդման եղանակը. Մենք մի քիչ առաջ
տեսանք՝ թէ երգեցողութիւնը ինչ բարերար ազդե-
ցութիւն ունի երեխաների համար՝ պատկերները ևս
աւելի. այսպիսի դպրոցների համար պատկերները նոյն-
չափ կարեւոր են, որչափ հացը մարդուն:

Գրատախտակից կախ արած տեսարանը մեզ ներ-
կայացնում է զիւղից ոչ հեռու մի խիտ անտառ. պարզ
աչքերով նկատելի են շատ առարկաները. մի կողմում
անտառապահի տնակը, երկրորդ կողմում վառուում
է կրակը, աշխատաւորներ ևլն. այդ հրաշալի նիւթի վե-
րայ ի՞նչ էք կարծում՝ մի դասամիջոցում 45—50 րո-
պէում քանի՞ կենդանի խօսքերի հետ կը ծանօթա-
նանք. թուենք՝ անտառ, աշխատաւորներ, սղոցներ,
կացիններ, տնակ, կտուր, լուսամուտ, ծխնելոյզ, ծառեր
իր շատ տեսակներով, շներ, տակառ, ջուր, տաշտ, կին,

կովկիթ, կով, խոտ, հորթ, կարծեմ դեռ շատ բան
կայ: Աւանդման եղանակը Ա. դասի նման է. յետոյ
այդ խօսքերից պէտք է շինել նախադասութիւններ,
որ յետոյ մի ամիոփ համառօտ բան պատմէք. ու-
րեմն տեսարանների վերջնական նպատակ պէտք է
լինի շինել փոքրիկ պատմութիւն և կամ ոտանա-
ւորներ սովորելու համար. այդպիսի տեսարաններից
շատ պէտք է օգտուել. օրինակ անհրաժեշտ է ընտա-
նիք պատկերացնող տեսարաններ. ասենք նստած են
թէյ խմելու կամ ճաշ անելու: Կարելի է սովորեցնել
շատ խօսքեր՝ տատ, պապ, հայր, մայր, եղբայր, քոյր,
խաղալիքներ, աթոռներ, սեղաններ, շաքար, թէյ, բա-
ժակ, ինքնաեռ, թէյնոց, թէյաման, բաժակակար, զգալ
և այլն և այլն: Այդ պատկերից էլ կազմել փոքրիկ պատ-
մութիւն. «մեր ընտանիքը. ես ունիմ հայր և մայր,
երկու եղբայր և երեք քոյր»: Ինչպէս ձեռնարկումն է:
Նիւթը մի քանի դասերի պէտք է բաժանել:

Նախնական դասերին՝ մանաւանդ դասարանում
կենդանիների պատկերներից պէտք է օգտուել: Այսպէս
կախ է արած «շան» պատկերը. դա մի քանի դասերի
նիւթ կարող է տալ. սովորեցնել բոլոր մասերը, ցոյց
տալով և այլն: Ծուռ, գլուխ, ականջներ, աչքեր, դունչ,
քիթ, քթածակեր, շրթունքներ, ատամներ, լեզու,
պարանոց կամ վիզ, մէջք, պոչ, փոր, ոտներ (հա-
մարել) ճանկեր: Այդպէս և այն կենդանիները որոնք
դասադրքի մէջ մեզ կը պատահեն: Յետոյ նախադա-
սութիւններ շինել: Ծուռը ունի երկու ոտ: Նա ունի
մէկ պոչ: Նա ուտում է հաց, միս (ցոյց տալ քո մարմնի
վերայ) և ապա պատմութիւնը յարմարացնել դասա-

զրքի պատմութեան հետ. օրինակ, «Ազահ շուն» և շնանպայման դասազրքում եղած անճանօթ բառերն էլ պէտք է առաջուց սովորեցնել, եթէ գիտէք, որ չգիտեն օր. կամուրջ և այլն: Այս ամենը մենք զրում ենք և կարդում ենք մի րոպէում. բայց շատ էլ հեշտ չէ նպատակին հասնել, ամիսներ ու տարիներ են պէտք: Երեք տարուց յետոյ իմ տաճկախօս հայ աշակերտները շատ լաւ ազատ խօսում էին, հասկանում և գեղեցիկ առողանութեամբ կարդում: Թելադրութիւն անում, իսկ երրորդ բաժանմունքի աշակերտները և փոքրիկ պատմուածքներ էին զրում: Կարող էին հայոց լեզուից թեմական դպրանոցի ա. դասարանը մտնել:

Չ Ե Ռ Ն Ա Ր Կ Ի Մ Ա Ս Ի Ն

Թէև շատ ցանկալի է, որ մեր դպրոցներում դասազրքերի նմանութեան սիստեմը ընդհանրանար, բայց մենք այդ մասամբ անբնական կը գտնենք, որովհետև Երևանում ապրող աշակերտի նիստ ու կացը և այլն, երկրի կլիման, բնութիւնը նոյնը չէ, ինչ որ օր. Խրիմի՝ Եւպատորիա քաղաքում ապրողինը. և որովհետև ցանկալի է, որ դասազրքերը կազմուած լինէին աշակերտի համապատասխանող կեանքին, նիստ ու կացին, դորա համար էլ նմանութիւնը այդ տեսակէտով նոյն իսկ փնաս է. Երևանցին չգիտէ շոգենաւը ի՞նչ է. իսկ Բաթումցին ամեն օր է տեսնում. կարծեմ մեր միտքը պարզ է: Ապա բարբառը. աւելի լաւ կը լինի որոշ նահանգների համար ունենայինք առանձին դասազրքեր, այդ էլ դժբաղդաբար դժուար և անիրագործելի է. ուստի կը մնայ հանգամանքների հետ համակերպուել. և ուսուցիչը բառերի պաշար սովորեցնելիս՝ պէտք է աշխատի իր ընտրած դասազրքի առաջին դասից սկսած սովորեցնէ դասազրքի խօսքերը, որ գրել, կարդալ սովորեցնելիս գործը հեշտացրած լինի և աշակերտները կարդացածները կարողանան հասկանալ, բայց չըլինի՝ թէ կաշկանդուիք. թող իւրաքանչիւր ուսուցիչ վարուի այնպէս, ինչպէս տեղի հանգամանքներն են ցոյց տալիս. մենք մինչև անգամ առաջի տարին գրել ու կարդալ սովորեցնելը աւելորդ կը գտնենք. բայց ի՞նչպէս հասկացնել տգէտ ծնողներին և հոգաբարձուներին:

ԿՍՐԵՒՈՐ ՕԺԱՆԴԱԿԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ

Այս ամենից յետոյ կը մնայ մեզ մի քանի միջոցներ կամ օժանդակող ճանապարհներ ևս ցոյց տալ եթէ յիրաւի ուզու՞մ ենք օգտուել:

1. Պէտք է ունենալ զիշերօթիկ դպրոցներ, զոնէ ապառայ նոր հայախօս սերունդ ունենալու փափագի յոյսով. սա ամենաէական և լուրջ միջոցն է. ապացոյց, ձեմարանում շատ սաներ ընդունելիս՝ եղել են տաճկախօսներ, չեքքեղախօսներ, ուտիախօսներ. բայց մի քանի ամիս անցած նորա արդէն մօտացել են հայ լեզուի իւրացմանը: Սա անհերքելի փաստ է: Այդ կողմից զիշերօթիկների օգուտները շատ են:

2. Եթէ այդ անհնարին է, զոնէ կիսազիշերօթիկ դպրոցներ ունենար ուր աշակերտները առաւօտից մինչև երեկոյ դպրոցում անցկացնեն, այնտեղ թէյ խումեն, նախաճաշ անեն, ճաշեն, խաղան, պարապեն ևլն: Մենք ծախքերի և այլ հարկաւոր յարմարութիւններ ստեղծելու մտտին կը թողնենք, որ ամեն մի հասարակութիւն ինքը հոգայ իր հանդամանքների համաձայն:

3. Դպրոցներում մտցնել առաւօտուայ և կէսօրուայ պարապմունքների ձևը, որով միջոց կը տանք աշակերտներին նախ՝ թարմանալու, կազդուրուելու, հանգստանալու և երկրորդ մի քանի ժամերով աւել պահել դպրոցում՝ նշանակելով մարմնամարզութեան, խաղերի, երգեցողութեան կամ զբօսանքի դասեր:

4. Ուսուցիչների թիւը շատացնել. երկրորդ ունենալ տնային վարժուհիներ, յանձնելով ամեն մէկին 4—5 հոգի. վարժուհիները և այն յարմարութիւններն ունին, որ կարող են ամեն մի ընտանիքում ապրել. մի ամիս մէկի ընտանիքում՝ երկրորդում միւսի ևայլն. ծախքն էլ է թեթեւանում: Բացի դրանից մի քանի ծնողներ միասին հաւաքական ուժով կարող են և առանձին վարժուհիներ ունենալ:

5. Ամեն մի դպրոց պէտք է ունենայ թանգարան (մուզէյ): Երեխան մի առարկայ ուսումնասիրելու ժամանակ որքան շատ զգայարաններով օգտուի, այնքան լաւ կ'իւրացնի: Կազմել թանգարաններ ... «զընալ աշակերտներով դարբնոցը» *) ...

Եթէ այդ ամենը հարկաւոր են հայախօս դպրոցների համար, ուր աշակերտները հնարաւորութիւն ունին՝ զուցէ և ուսուցչի պատմածով կամ բացատրութիւնով էլ իւրացնել, որչափ աւելի կարեւոր է ուրեմն այն դպրոցների համար ուր նոր պիտի լսեն և սովորեն դարբին, դարբնոց, սալ, մուրճ, երկաթ անուէնները. դորա համար մենք անպայման պահանջում ենք և անհրաժեշտ էլ է ունենալ թանգարան, բառի բուն նշանակութեամբ. պէտք է ունենալ ընդարձակ դահլիճ, ուր կը լինին ամեն տեսակ առարկաների կոլեկցիաներ. առանձին-առանձին պահարաններում պահած ունենալ քարերի, խաղալիքների, հազնելիքների, գործիքների, գէնքերի, խմիչքների, կտոր-

*) Տես Համառօտ տեղեկադիր Քաղ. եկ. տար. Մեօ. եւ Հն. դպ. 1905/6 ուս. տարեշրջանի, երես 14, 1907 թ.:

ների (գոյների համար), մրգերի, պտուղների, ոտնամանների վերջապէս՝ ինչ որ հնարաւոր է, աշակերտները մի տարուց յետոյ այնքան կը հարստացնեն, որ ինքներդ կը զարմանաք. յետոյ կսկսէք ջոկել, լաւերը թողնել, վատերը դուրս ձգել, որ տեղ չըբռնեն. ապա տան կահ կարասիքների տեսակները:

6. Պէտք է ունենալ ամեն տեսակի պատկերներ վայրենի և ընտանի թռչունների, կենդանիների ու գազանների, բոյսերի, սողունների, միջատների, ձրկաների, ծովային կենդանիների, հանքերի (մետաղների), գեղեցիկ գունաւոր, մեծազիր բնութեան տեսարանների: Իհարկէ աղքատ դպրոցների համար դժուար է բայց եթէ ուզում էք, որ անպայման ազատուէք օտար լեզուի գերութիւնից ոչ մի բան չըպէտք է խնայէք: Մեր առաջարկած եղանակով գոնէ պէտք է 2—3 տարի օտար լեզուն այդ տեսակ առաջ տանիլ, այդպիսով մանուկ աշակերտներին գործնականի հիմքը տրուած կը լինիք, որի վերայ և կը շարէք ազատ պատերը:

7. Աւելի քան անհրաժեշտ է և միանգամայն նպատակայարմար ունենալ մանկական պարտէզներ, սերմանոցներ: Այո, գործնականապէս լեզու սովորելու միակ միջոցը սերմանոց վարժարանն է, այն էլ 4—7 տարեկան հասակում. մեր ծնողները կարծում են, թէ մանկական պարտէզներում ոչինչ չեն անում: այդ մեծ սխալէ. այդ ձեր դպրոցի լիակատար նախադուռն է. փորձեցէք ունենալ և կը բաւականանաք տուած արդիւնքով:

ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ ԽՈՉՆԴՈՏՆԵՐ:

Առաջին տարում հոգաբարձուները ծնողների հետ անբաւականութիւններ ստեղծեցին. բողոքում էին, որ երեխաներին զբել կարգալ չեն սովորեցնում. նոքա կարծում էին, թէ աւելի դժուար է իրանց բաւականութիւն տալ. չէին հասկանում, որ իրանց պահանջը առնուազը 2-3 ամսուայ մեքենայական գործէ. զարմանում էին, որ մենք միշտ գրսում էինք պարսպում. դանդատը հասաւ պ. քաղաքական դպրոցների տեսչին, իսկ Նոր-Նախիջ-ի կոնսիստորեան քննիչ նշանակեց, Օդես. Տ. Կ. Ա. Ք. Խորասանջեանցին. խեղճ քահանայ հիացաւ տեսնելով փողոցային ցնցոտիները: Աւելի զարմացաւ երբ քննութիւնը նոցա վերայ անցանք. չգիտեմ ինչ հասկացաւ, ինչ էին զբել, միայն մեր ռոճիկն աւելացաւ տարեկան 60 րով: Ամեն մի նոր գործ միայն համբերութեամբ յառաջ կըդրնայ յաղթելով խոչնդոտներին:

Գուցէ ասոցներ լինին, թէ այդպիսի մի տաժանակիր աշխատանքի համար ինչ ենք ստանալու. — միայն 30 — 40 ր. ամսական այն էլ անախորժութիւններով: Առաջարկը ուղիղ է. ստացածը պախարակելի. իսկ ապագան անմխիթար. հետեւապէս շատ բնական է, որ գործին անձնատուր մարդիկ քիչ ենք ունենալու: Ուսուցիչները ապրում են ճնշուած, հոգսերով ծանրաբեռնուած: Գրքերի կարիքը, տղաների կրթութեան մտածմունքը, ձերութիւն, ահա թէ նոքա բնականաբար աւելի ինչերի մասին են մտածելու, ինչպէս ամեն մի անհատ: Ապա հոգաբարձուների ու առաջնորդ-

ների անմիտ վերաբերմունքը, ամեն տարի ուսուցիչ փոխելը—Աղբերմանում, 1860—1906 փոխել են 50 ուսուցիչ, այս ամենը խոշոր թերութիւններ են, որոնք մեռցնում են յառաջադիմութեան գործը. դուրս համար ուսուցիչների ապահովութեան՝ կենսաթոշակ նշանակելու հարցը անյետաձգելի և լուրջ գործերից առաջինն է: Ապահովուած ուսուցիչներով միայն յառաջադիմութեան գործը կապահովուի:

Ինկատի ունենալով, որ մեզանում կազմուում է Ուսուցչական միութեան ընկերութիւն և կամ ծրագրի մէջ է մտնում ուսուցիչների ապահովութեան խնդիրը—ցանկալի է, որ այդ ղեկավարող մարմինը ուշադրութիւն դարձնէր երկու հանգամանքի վերայ նախ՝ ամեն տարի ուսուցիչ փոփոխելու ձևը կազմակերպելու երկրորդ դասադրքի նմանութիւնը մտցնելը: Միայն հաւաքական ուժով մեր դպրոցական գործը կարելի է ցանկալի վիճակին հասցնել:

« Ազգային գրադարան



NL0225945

11. 146